

Ա Խ Ո Յ Ե

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ա Զ Գ Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր  
Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր

Տ Ա Մ Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե

Ճ Ր Ջ Ա Ն Մ Ի Ա Մ Ե Ա Յ



Յ Ե Ր Ո Ւ Ծ Լ Ւ Շ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Մ Ս Բ Բ Ո Ց Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ց

1875

# ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

## ՑՈՒՆՎԱՐ

<b>ԵՐՐ ՏԱՐԻ . — Խորհրդածութիւն</b>	
կենաց և մահուան վրայ .	1—4
<b>Մարդարէական յարակցութիւն</b>	
ընդ մէջ Հին և Նոր Կատարա-	
նաց . ( Եար . և Քէլք ) .	5—10
<b>Յիշատակաբան և երկու գէպը</b>	10—12
<b>Հոգի ժողովրդոց .</b>	12—14
<b>Բդեշն մը և երեք բարեկամներ</b>	14
<b>Մաղաքիա վարդապետ .</b>	14—15
<b>Ազգեցութիւն Ազգային սրարե-</b>	
րական հրատարակութեանց	15—18
<b>Մեղայ Աստուծոց .</b>	18—19
<b>Աշտա .</b>	19—21
<b>Հայոց մեր .</b>	21—22
<b>Գրոց ու Բրոց .</b>	22—24
<b>ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .</b>	24

## ՓԵՏՐՎԱՐ

<b>Տօն նահատակութեան Ս . Վար-</b>	
դանանց և հանդէս ֆառան-	
դաւորաց Վարժարանի .	25—31
<b>Պատմական յիշատակարան .</b>	32—37
<b>Հրովարտակ Ալիք .</b>	37—39
<b>Վարդապետութիւն և բարոյա-</b>	
կան .	39—41
<b>Տեղեկութիւն Գօթայից .</b>	41—44
<b>Խոստովանութիւն Տէրոյենց Պա-</b>	
տուելոյն ,	44—45
<b>Մահացուցակ .</b>	45—46
<b>Տիուր գէպը մը .</b>	46—47
<b>ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .</b>	47—48

## ՄԱՐՏ

<b>Կրթութիւն ժողովրդեան .</b>	49—54
<b>Մարդկային սերի կատարելա-</b>	
գործութիւնն . — Բնութեան	
բարցական օրենք .	54—58
<b>Երդող թռչուններ .</b>	58—59
<b>Արինդ հովուական .</b>	59
<b>Արձան յաւերժական սիրոց ՚ի</b>	
ոգալի մոհ .	60—61


<b>Տեղեկութիւն Բեթէհեմի աղ-</b>	
գայնաց վերաց .	61—64
<b>Կիւրին .</b>	64
<b>Սոխոսկ Հայաստանի .</b>	65—66
<b>Տ . Տ . Մկրտչ սրբազնակատար</b>	
կաթողիկոս Կիւրին .	66—67
<b>Պատրիարքական Պէրաթ .</b>	68—70
<b>Մալականք և Դուխաբօք .</b>	70—71
<b>ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .</b>	71—72
<b>Նոր հրատարակութիւն .</b>	72

## ԱԳՐԻԼ

<b>Կրթութիւն ժողովրդեան ՚ի Զո-</b>	
ւիցերիս . ( Եար . և Քէլք ) .	73—76
<b>Կրինամլրատութիւն .</b>	76—78
<b>Գորոցական հանդէս .</b>	78—83
<b>Հնդկաստանի Հայերը .</b>	83—85
<b>Հերբումն սխալ հրատարակու-</b>	
թեան .	85—86
<b>Վարչական ծանօթութիւն .</b>	87—88
<b>Վէճ ՚ի մասին Հայոց Նկեղեցա-</b>	
կան ձայնագրութեան .	88—89
<b>Հակադրութիւն բարառնաբար</b>	
ոգեալ սոսանաւոր չափով յԱն-	
տօնէ աբեղացէ Տիխիսեցւոց	90—96

## ՄԱՅԻՍ

<b>Կրթութիւն ժողովրդեան ՚ի Զո-</b>	
ւիցերիս . ( Եար . և Քէլք ) .	97—101
<b>Ատենախոսութիւն Տ . Ներսիսի-</b>	
Ամեն . Պատրիարքի Կոստանդ-	
նուպօլոց .	102—105
<b>Միրզա առ Մասիս .</b>	106
<b>Մասիս առ Միրզա .</b>	107—109
<b>Քննութիւն աստուածաբանու-</b>	
թեան վարդապետի ( Կօբարի )	
աստիճանն ստանալաւ համար	110—114
Կուիւ ՚ի լեւոն ձիթենեաց .	114—115
<b>Նոր ընկերութիւն ՚ի Գամասկոս</b>	115—117
<b>Քրիստոնէութիւն ՚ի Հնդիկա</b>	118—119
<b>ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .</b>	119—120



# Ա Յ Ի Շ Ո Ւ

ՏԱՄԱՆՔՈՐԴ ՏԱՐԵ  
Թիվ 12.

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ԴԵԿԱՆԱՑՈՒՅՑ 31  
1875.

Ա Զ Գ Ա Յ Ի Բ , Բ Ո Ն Ս Ս Ի Բ Ո Կ Ա Ն Ե Ւ Գ Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ի Ծ

Դ Ա Ս Ե Լ .

Տ Ա Ճ Ա Ր Ի Ք Ա Ր Ե Ր Է

Ա Տ Ե Ա Ն Ե Ր Պ Պ Ա Վ Ա Ր Ա Յ Ի Բ : Մ ա ր է հ ա բ ։  
Մ ա ր է թ ա յ ի 2 : Պ ա ր է թ ա յ ի 6 :

**Յ** Ե Ս Ո Ւ Ս Ի Գ Ր Ի Ս Ո Ո Խ ո ւ ս ո յ ն խ օ ք ե մ ի  
յ ա ն դ ի մ ա ն ա կ ա ն ի խ օ ք է . բ ա յ ց է չ գ ա շ  
ո ւ ն , ա յ լ ծ ա ն ր և ա զ գ ո ւ : Ա շ ա կ ե ր ա ն  
ն ե ր ն Յ ի ս ո ւ ս ի հ ե տ Տ ա ճ ա ր ն կ ը մ լ ո ւ  
ն ե ն , շ ի ն ո ւ թ ե ա ն գ ե ղ ե ց ի ս ո ւ թ ե ն է ն , շ ր  
ք ե ղ ո ւ թ ե ն է ն և հ ա յ ս կ ա պ ու թ ե ն է ն կ ը  
յ ա փ շ տ ա լ ի ն , ս ա կ ա յ ն ն ո ր չ է ր , ո ր կ ը  
տ ե ս ն է ի ն զ ա յ ն , և լ ո ւ թ ե ա մ ի զ ա ր

մ ա ն ա լ ն բ ա ւ ա կ ա ն չ ը հ ա մ ա ր ե լ ո լ ի ը  
հ ա ր ց ա փ ո ր ձ ե ն ի ր ե ն ց Վ ա ր դ ա պ ե ս ն ,  
կ ը հ ր ա ս ո ւ ր ե ն , ո ր պ է ս զ ի ն ա ե ւ ս ի  
ր ե ն ց պ է ս զ ա ր մ ա ն ա յ , ն շ մ ա ր ե լ տ ա լ ո լ ,  
ո ր ա յ ս չ է ն ք ն զ ա ր դ ա ր ու ա ծ է գ ե ղ ե ց ի կ  
ք ա ր ե ր ո լ ե ւ ա շ տ ա ր ա կ ն ե ր ո լ : - Յ ի  
ս ո ւ ս փ ո խ ա ն ա ս կ ն ո ց ա հ ե տ զ ա ր մ ա ն ա  
լ ո ւ , ՚ի պ ա տ ա ս լ ո ւ ս ի ն ո ց ա հ ա ր ց մ ա ն ,

այսպէս կ'առէ . “Այդ շինուածքին կը նայիք . — Տեսանէք զայդ ամենայն . եւ կեսեն տւուրք յորս ոչ թողի այզը քար ՚ի քարի վերայ , որ ոչ քակտես ցի ” :

Եթէ կամենանք աշակերտներն արդարացնել այսպէս պիտի ասենք . — Եթէ նոքա , որք տաճարն շինեցին եւ գեղեցիկ քարերով ունուերներով զարդարեցին , մեղաւոր չ'են , աշակերտներն եւս առաւել մեղաւոր չեն նոցաձեռակերտին վերայ զարմանալով : Առաջին խնդիրն այս է , որ իմանամք թէ պատշաճ էր արդեօք , որ սցն չենքն քեղեցիկ լինի . եթէ գեղեցիութեան պատշաճաւորութիւնն ընդունինք՝ զարմանայն նորա հետեւամքն է . վասն զի գեղեցիկն շինուած է արդէն զգալու և զարմանալու համար : Գեղեցիութիւնն զգալն , գեղեցիութեան վերայ զարմանայն այնշափ բնական է , որ սցն տապաւորութեանն դիմադրելն անկարելի է : Սցն տաճարի չենքն զարդարուած էր ամենայն ճարտարութեամբ . բան մի զանցառութեան արքուած չ'ը . այնպէս որ տակաւելն ներս չը մտած՝ սցն սրբավայրի սեմէն իսկ մարդ կը յափշտակուէր և կը սրանչանար . Կարող ենք ասել որ Մեծին Ներով դէսի ձեռքով շինուած սցն տաճորն , որ Զօրաբարելի շինած տաճարի տեղայն վերայ էր , թէ մեծութեամբ , թէ չըեղութեամբ և թէ փառաւորութիւն կը գերազանցէր ոչ միայն երկրորդ , այլ նոյն իսկ տռացն տաճարէն անդամ : Տաճարն շինուած էր երեք տափարակներէն ամենէն բարձրագունի վերայ , ուրիշ միացած էին իրարու հետ ընդարձակ աստիճաններով և սիրուն գաւիթ մի կը ձեռացնէին երկիրդ և եռակարդ սիրներով : Սցն միաւորուած սիւնաղորդ գաւիթիթներու վերայ կ'երեւէր որբավայրի խիկական գաւիթն :

Այս վերջին գոտ թի անտառ անձնն սիւներու մէջէն անցնելով կը մանէին տաճորի մէջ , որոյ հարիւր կանգունը քարձր պատերն և նցյնշափ ըստն շրջապատն թանկագին մարմարինէ էին , որ կը փայլէր եւ կը փազիտղէր իրեւել ուկի շողովուն : Սրբավայրն կը քննապատէն կողմանակի շենքէր , յանկաւ որութեամբ , երբակի յարկիրով , և աւելի մէծութիւն կը տայցին տաճարէին :

Այքան մեծութիւն , սյսպան չըեղութիւն , որոյ լոկ նկարագրութիւնն կը յափշտակէ զմարդ , միթէ կարող էր չ'ազդելաշակերտաց երեւակայութեան վերայ . և միթէ պիտի չըներէինք մենք , երբ կ'աղաղակեն . Վարդապետ , տես թէ ինչպիսի քարեր են . ինչ նուերներ և սրպիսի շինուած :

Թողունք հին տաճորի նկարագրութիւնն և ներկայի վերայ խայմնք : Ո՞ր քրիստոնեայն է , որ չը զարմանար , երբ կը մտնէ մի հոյակապ եկեղեցւոյ մէջ , որ զարդարուած է ամենայն չըքեզութեամբ և միաւուոր ու հմուտ ճարտարապետութեամբ : Թէ պէտ շենոյներն մեռած են , բայց գողցես կը խօսին տակաւելն . գնդցես իրենց խորհուրդն ու մաածութիւնն միացած է իրենց ձեռակերտին հետ . գնդցես նոցատուածուածութեան շունչն կը նշից յամենուատէք և կը քարոզուի դարուց ՚ի գարս : Ո՞ր քրիստոնեայն է , որ այս ամենն տեսնելով չ'ասէ իր մերձաւորին՝ աշակերտաց նման . տես ինչ գեղեցիկ քարեր են եւ ինչ գեղեցիկ շինուած . և զայս ասելով չ'ենթարկէ զնիքն Տիրով յանդիմանական խօսքին . “Այդ քարերու և շինուածի գեղեցիութեանն կը նայիք ” :

Երբ մեր հոգին մերնայուածքէն աւելի հեռակ շերժար , երբ մեր հոգին կանգ կ'առնաւ այն տեղ , ուր մեր նայուածքն սախալուած է կանգ առնաւլ երբ արտա-

քիննշաններն կտմնշանակներն, ձեւերընչե տեսան՛լ իրերն մեր հոգին կը գերին, երբ արտւեստի շքեղութիւններն մեր սիրան երկրի հետ կը կապեն փոխանակ դէս ՚ի երկինքն բարձրանաւըւ . միավ բանիւ երբ մեր հոգին մեր նայուածքէն առաւելութիւն չ'ունի, միմէ Յիսուս Քրիստոս յանդիմանելու իրաւունք ցնչնի : Այս պատճառաւ եր, որ Յիսուս Քրիստոս յանդիմանեց իւր աշակերտներն : Նա կարդաց նոցա սիրսն ու միտքն . նա տեսաւ նոցա հոգւցն մէջ յանկութիւն մարմնոց, ցանկութիւն աշոց և հսկարտութիւն կենաց . որոնք մթութեան երեք շղթաներ են, որոնք Աստուծոյ թըշնամին պինդ կը կապէ զմել արտաքին խաւորի հետ : Յիսուս կը տեսնէր որ աշակերտոց զարմացման մէջ, աշակերտաց բացագանցութեան մէջ հաւասարապէս կը խօսէին մարդն և հրէայն : Մարդէ՞ որ յափշտակուած էր տեսն բանվ, ինչ որ կ'երեւէր և կ'արհաւմորհէր, ինչ որ չ'եր երեւիր . Հրէայն՝ որ կը պարծէր արտաքին շքեղութեամբ կրօնական որաշուաման, որոյ ներքին խորհուրդն, ներքին խմասան վաղուց արդէն խուսափած էին իւր սրտէն և մողէն և ինքն յամառութեամբ կտպուած էր օրինաց հետ, այսինքն ըստուերի հետ, և այս այն վայրինին, յորում սոյն օրէնքն ամեն ժամանակին աւելի ստուեր էր . վասն զի ամենայն ինչ լրումն առած էր գալստեամբ Յիսուսի Քրիստոսի : Կը տեսնէր ահա Յիսուս աշակերտաց հոգւցն մէջ մարդէն իւր յանկութեամբ և Հրէայն իւր պարծենկոտութեամբ . ուստի և կ'առնէր, Այս քարերուն և շննուածին կը նայիք : Ի՞նչ են այս քարերն, եթէ ոչ փոշւոյ եւ աւազի հատիկներ, որոնք այս պառաւաւ միտյն մէջ կ'երեւին, որովհետեւ դուք փափրէր, Ի՞նչ են այս

նուերներն, որոնք կամ երկիւղիւ, կամ մնափառութեամբ, եւ կամ սովորութեամբ, բանի կորդուած են այն հոգին ներէն, որոնք ըլ կամեցան զնիքեանս Աստուծոյ նուերել : Ի՞նչ է այս մարմարիններու, ոսկեդրուագներու եւ այս ամեն զարդերու փայլուն պատրանքն, որոց բարեպաշտական իմաստըն վաղսւց արդէն մոռցուած է : Այս սնուտի շքեղութեանց կը նայիք . այս է որ ձեր սիրտն գրաւած և յափշտակած է :

Բաց յայսմանէ մի պարագայ եւս կար, որ մասնաւորապէս պատեհութիւն կընծայէր Տիրոջ յանդիմանական խօսքերուն : Յիսուս ինքն ես տաճարէն ենելով մի բան տեսած և ս . շակերտներուն ցցց տուած էր, որ քառանց Յիսուսի և ոչ նայելու անդ ոմարժանի պիտի համարէին : Ի՞նչ էլ այս, եղաւըք, ո՞վ էր, որ Յիսուսի նայուածքն ուուշագրութիւն իւր վերայ գրաւած էր:

Սա էր մի աղքատ կին, որ ողորմութեան գանձանակին մէջ ձգած էր մի լուսաց, այսինքն ինչ որ ունէր եւ կարեւօր էր իրեն զայն կարօտելոց օգնութեան նուերած էր : Յիսուս Քրիստոս նշանակել տուած էր իւր աշակերտաց սոյն առատաձեռնութիւնն, որ, ըստ իւր դաստղութեան, աւելի մեծ էր քսն հարատութեան ամենառատ առուբերն : Այն ինչ Յիսուս մարդասիրութեան սոյն սրտաշարժ օրինակն աշակերտաց աշաց ներկայացուցած էր, և այն ինչ մի պարզ և աղքու խօսքով մտածութեան գեղեցիկ նիւթ տուած էր աշակերտաց, ահա այս փափուկ ժամնուն մէջ, և գողցես ՚ի պատասխանի Յիսուսի խօսքերուն, աշակերտը եւս կը հրաւիրեն իրենց Վարդապետն, որ իրենց հետ զարմանաց տաճարի շքեղութեան վերայ : Որովհէս թէ կամին ասել իրենց Վարդա-

պետին . — Դու զայն արժանի համաշըցիր ուշագրութեանդ և մեք զայս արժանի համարեցինք մեր ուշագրութեան : Դու կը նայիս պարզ հոգւոյն , որ զինքն կը նուիրէ . իսկ մեք կը նայինք շքեղ.քարերուն : Քո սիրած տեսարանըն է բարյական մեծութիւնն ու գեղեցկութիւնն . իսկ մեղ հաճելի տեսարանն է նիւթական գեղեցկութիւնն ու մեծութիւնն : Հոգւովլ և ձշմարտութեամբ երկրպագութեան մի գործըն անգամ կը յափշտակէ , կը կորզէ գքեղ այս արտաքին պաշտաման փառաւորութենէն , որ կը կատարուի սոյն շընապատին մէջ . իսկ զմեղ սոյն արտաքին շքեղութիւնն կը գրաւէ և մեր աեսութիւնն գերելով կը հեռացնէ այն հոգւովլ և ձշմարտութեամբ աստուածաշտութենէն , որով միայն կը փառաւորի մեր Երկնաւոր Հայրն : Եւ ոչ միայն մեր բնագդումն կը աանի կը հեռացնէ զմեղ այն կետէն , զոր դու կը նշմարես , այլ այնքան յափշտակուած ենք , որ նոյն իսկ.քո ազդարարութիւններդ անկարող կը լինին դէպ ՚ի քո դիտած կողմն դարձնել զմեղ : Դու ասացիր , ահա այն բանին վերայ պէտք է զորմանալ . իսկ մեք կ'ասենք . ահա այս բանին վերայ կը զարմանանք :

Ա.յս խօսքերուն , այս մտածմունքներուն էր , որ պատասխանեց Յիսուս . Ա.յդ բանին կը նայիք . այդ կը զարմացընէ զձեղ : Տակաւին քանի՞ քանի՞ խօսքեր կարող էր յաւելուլ Յիսուս : Ո՞չափ պատրաստի փաստեր ունէր , զորս , եթէ պատշաճ դատէր , կարող էր ՚ի կիր առնուլ և յանդիմանել թէ աշակերտաց ապշտութիւնն և թէ նոցադրաւումն ու մնուի զբաղումն : Բայց Յիսուս ոչ շատ խօսքեր կը սիրէր և ոչ փաստաբանել . Մի հասարակ խօսք , մի սովացցոյ ՚ի միջոց բազմաց , բաւական կը համարէր նա , բայց ՚ի հարկէ

այս մի խօսքն եւս միշտ վճռական էր և հատու , միշտ ուժգին էր և ազդեցիկ , միովլբանիւ , ինչպէս առ հասարակ ասուած է ասասուածային խօսքերու համար , կը թափանցէր մինչեւ սրտի և մաքի յետին ծալքերն , մինչեւ ոսկերաց յօդերն եւ ուղեղն : Յիսուս մի խօսք միայն կ'ասէ ուրեմն , և ահա նոյն խօսքն . « Եկեսցեն աւուրբք , յորս ոչ մնասցէ սցդրքար ՚ի քարի վերայ , որ ոչ քականեցի » :

Ա.յս յիշուած քայքայումն , այս աւերն ու կործանումն յանկարծագէսպէ , ուժգին և սսակալի : Սա այն աւերն չէ , զոր տարիներն ու դարերն կ'անեն անզգալի կերպիւ : Ա.յս աւերումն այնպիսի մի թշնամուց գործ պիտի լինի , որ ժամանակի թշնամութենէն , ժամանակի սպառումէն աւելի անհամբեր է : Եւ որովհետեւ ոչ ոքի մորէն չ'անցնիր , որ սոյն տաճարն քակուի սյն ժողովրդեան ձեռքովլ , որ զայն կառաւցած է , իրեն համար փառքու պարծանք կը համարի և կ'ընդունի զայն իրերեւ վառարան ազգայնսութեան . ուրեմն խօսքն մի այլ ժողովրդեան վերայ է , մի արշաւանց և աշխարհակալութեան վերայ է : Ա.յս միակ խօսքն իսկ կը բանաց աշակերտաց մտածութեան համար մի սոսկալի տեսարան նախատանաց , աւերածոյ և ահաւոր տառապանաց : Սոյն խօսքն թերեւովկը պարունակէ իւր մէջ Երբայեցի անուան և ժողովրդեան սպառըս պուռ Ընջման մարդարէութիւնն : Առտուածային մարդարէն մի կէտի վերայ միայն լուսութիւն կը պահէ : Նաշը յայտնէր թէ Երբ պիտի ուղատահին այս բաներն : « Եկեսցեն աւուրբք ո՛կ'ասէ նա . բայց խկոյն աղատ թուիչ տալով սոյն մարդարէութեանն , որ կ'եռայ իւր սրտին մէջ , նա խիստ լաւ կը հասկացնէ նոցա թախծեալ սրտերուն ,

որ այս առգագան շատ հեռի չէ և այն Տաճարն, որ տակաւին առողջ է բոլոր յիշատակարանաց մէջ, քանզի յիսուն տարի չըլրաց, որ շինուածէ, այս Տաճարըն այլ եւս յիսուն տարի պիտի չը առենէ.

Սակայն եթէ Տաճարի կործանուամէն չ'ենթադրի անդամ՝ երկրի աւերութեան եւ ժողովրդեան սպառսպուռ ջնջումն, և եթէ այս բաներէն ոչ մինմօտալուտ լինի, դարձեալ Յիսուսի Քրիստոսի պատասխանն ըստ կորուսանէր քնաւիւր իմաստն ու զօրութիւնն : Այն պէս ընդունինք, որ իրր թէ Տաճարն պիտի կործանի ոչ թէ յանկարծահաս պատահարաւ, այլ յորով տարիներութւու և դանդաղ յաջորդութեամբ : Սակայն Ճշմարիտ է դարձեալ, որ երբ կ'առէ Յիսուս իւր ունկնդիրներուն (որոնք ինքեանիք իսկ գիտեն որ այնպէս է) թէ պիտի գան օրեր, որ սոյն հոյ յակապ շինուածի քարն քարի վերաց պիտի ըստայ, այս խօսքերով մեր Տէրն լիովին կ'արդարացնէ սոյն ծանր եւ քաղցր կշամբանիքն . “Այդ շինուածի մեծութեանն ու գեղեցկութեամնն կը նայիք ո :

Արանչելի՛ խօսք, որ իւր մէջ կը բովանդակէ ամեն ապացոյց : Յաւել տենականութիւնն ու Ճշմարտութիւնն անբաժան են, ինչպէս և ստութիւնն ու խարիսլութիւնն : Ինչ որ Ճշմարիտ է յաւելտենական է . իսկ ինչ որ յաւել տենական չէ, էութիւն չունի, այլ ըսկ երեւոյթ և անուն : Ամեն ինչ որ կ'երեւէ՛ Աստուած ստեղծած է չ'եւ բեւցածներէն : Հոգին, որոյ վառարանն է Աստուած, յառաջ էր քան զինութն և էր առանց նիւթոյ : Նիւթն սաւեղծ ծուեցաւ միայն նորա համար, որ լինի գործի ստեղծեալ հոգւոյ, լինի ձեւ նորա իենդանութեան և առարկայ նորա գործունէութիւնն : Բայց նիւթն

բնաւ ներբին բուն և բացարձակ արձէք չունի : Նիւթն իւր ունեցած բոլոր արժէքն կ'ընդունի իւր նպատակէն և իւր կիրաւութենէն : Հոգին միայն, որ բավական է Աստուածմէ, որ նման է Աստուածոյ հետ միանալու, հոգին միայն է անմահ . վասն զի արժանի է անմահ լինելու : Մի հատ հոգին բովանդակ աշխարհ կ'արժէ, կամ աւելի պարզ ասենք, ոչ միայն բովանդակ ներկայ աշխարհս, այլ եթէ սորտ նման ուրիշ շատ աշխարհներ եւս լինին, չեն կարող համեմատիլ և կշւուիլ մի հատ հոգւոյ հետ : Հոգին միայն արժանի է մարդոց գլխաւոր ուշադրութեան . վասն զի նա Աստուածոյ գլխաւոր ուշադրութիւնն յինքն գրաւեց : Եւ քանի որ հոգին և ամեն ինչ որ հոգւոյն կը վերաբերին անտեսանելի են, կարող ենք ասել Ճշմարտութեամբ, որ միայն անտեսանելի բաներն են արժանի զննութեան, և կերպիւ իւիք, պէտք է իսպառ կոյր լինել միւս մնացած բաներու համար :

Եւ ահա սյս պատճառաւ սյրի կնոջ լսւման, որ առանց ազազակի և հոչակի ողորմութեան գանձանաւին ընկաւ, ուշադրութեան աւելի արժանի էր քան թէ Տաճարի զարդերն և քարերն : Այս մի լոկ լումայ չէր, այլ հոգւոյ մի աներեւոյթ շարժումն, որ կ'երեւէր ողորմութեան սոյն լումային մէջն Այս ներբին շարժումն էր, որ մեծ էր գործէն, շատ մեծ էր նոյն իսկ Տաճարըէն և Տաճարի ամեն շքեղութենէն, ամեն աստիճաններէն, դաւիթներէն, կամարներէն, հոկայաձեւ պատերէն և պարիսպներէն : Եւ ոչ միայն այսշափ, այլ բաղդատութեան առնուեն անդամ անիրաւութիւնն է : Աշակերտներն, եթէ կամենան, կարող են սոյն Տաճարն կառուցանող խորհուրդն համեմատել

այն խորհրդոյ հետ, որ այրի կնոջ ձեռքէն դանիկն ՚ի գանձանակն ձգել կը տայ: Բայց աշակերտներն հեռի են այսպիսի համեմատութեան վերայ մըտածելէն: Եթէ մտածեին իսկ, մնաք նոցա համեմատութիւնն պիտի ընդունէնք միայն այրի կնոջ գործն գովիլու համար: Վասն զի այն պերճաշաբ իշխանն, որ իւր գանձուց աւելորդով կամիւր հպատակաց յամրօրէն յոսկի փոխարկուած քրատինքավ կանգնեց այն Տաճարն, եթէ համեմատենք այս այրի կնոջ հետ, որ ծածկաբար մարդասիրութեան գանձանակի մէջ կը ձգէ “ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանքս իւր ո”, ինչպէս կ’առէ Յիսուս Քրիստոս: Եթէ համեմատենք այս երկուական մէջ այս աղքատ այրին և մըշտի փոքր է այս աղքատ այրին և մըշտի փոքր է այս մեծ իշխանն միահեծան:

Իւրաքանչյուր անհատի հոգւոյ մեջըն է, որ պէտք է որմնել իւր մէն մի գործոց խկական չափն ու ճշմարիտ անունն, կամ, այլապէս ասենք, հոգւոյ գործքերն են միայն ճշմարիտ գործքեր: Այս այն գաղութաբներն մին է, որուն զգայական առարկայից ալիրապէտութիւնն ը թողուր որ հասնինք առանց գմուարութեան և սակայն անհրաժեշտ պէտք է որ զգայական ակրապետութեանն յաղթենք և բարձրանանք գէտ ՚ի հոգեկան գաղափարներն, եթէ կը փափաքինք կեալ ըստ ճշմարտութեան և ըստ Աստուծոյ: Մէք բացառիկ կերպիւ. և յատկապէս գործ կ’անուաննենք ամեն պաշտօն, զոր կը կատարէ մեր կամքն մեր ուժով կամ մեր մարմնաւոր կարողութեան միջոցաւ, որով մեզմէն արտաքը որ և իցէ փափախութիւն մի կ’արտադրի: Իսկ գործ չենք անուաներ, այլ մաածութիւն, խորհուրդ, զգացուածն, իշխան

այն ամենն, ինչ որ կ’անցնի մեր հոգւոյ մէջ, կամ ինչ որ կը կատարէ մեր հոգին առանց մարմնաւոր ուժոյ օգնութեան և առանց որ և իցէ փափախութիւնն մի արտագրելու արտաքին աշխարհի մէջ: Օրինակի համար, երբ վճռական դիտաւորութիւններ կ’ունենանք մենք և մեր կամքէն անկախ արգելքներով կատարումն կը խափանուի, մեք կը կարծենք որ քնառ զործեցինք: Եւ սակայն այն դիտաւորութիւններն ոչ միայն գործքեր են, (վկայ այս բանիս մեր խիզճն, որ խիզճն կը խայթէ զմեզ երբ վատ են), այլ խկապէս կատարուած ճշմարիտ գործքեր են: Մէք արտաքին գործքերն միայն նշանակ և յայտնութիւն են ներքնյին և սրտերուն նայող և քննող դիտաւորի համար (յաշօ որոյ արտաքին փափախումն կամ արտադրութիւնն մեծ նշանակութիւն ընդնի) ոչ այլ ինչ են արտաքին գործքերն եթէ ոչ աւելի զօրեզ կամ նուազ կերպիւ յայտնուած շարժումներ մարմնաւոր անդամոց: Մէք ոչ թէ պիտի գատուինք մեր նիւթական կամ արտաքին գործքերով, այլ մեր ՚ի ներքուստ կամեցածներով— մեր հոգւոյ գործքերով Վասն զի, չէ ասուած թէ մենք վարձ կամ պատիժ պիտի ընդունինք այն գործոյն համար ինչ որ մարմնով գործածենք, այլ ինչ որ մարմնոյ մէջ կամ հոգւով գործած ենք: Մէք արտաքին գործքերն ներքնյին ձեւերն են ու նըշակներն, յայտարարներն են ու վկայութիւններն: Եւ այս իմաստիւէ, որ չէ կորելի անտարբեր համարիլ այս ինչ կամ այն ինչ գործած գործն: վասրն զի, նախ՝ այս մի ապացոյց է, որ մենք կամեցած ենք այս ինչ կամ այն ինչ բանն, և երկրորդ՝ որ ՚ի ներքուստ ծնեալ այն գործքերն ըստ կամ վատ աղքեցութիւն կ’ունենան անշուշտ

մեր ներքին մարդոցն վերայ, նայելով  
այն գործոց լուսութեանն կամ վա-  
տանքեանն : Բայց պարագնեք իմանալ,  
որ ամեն ժամանակ մեր ներքին գործն  
է, որ պիտի քննուի : Եթէ այսպէս չըլիներ,  
պիտի առելիք ուրեմն թէ այն մարդն,  
որ ներքին կարողաւթեաններ ունիրացց  
արտաքին գործելց միջոցներէ զրկուած  
է, պիտի չենթարկուի գատաստանի .  
և թէ այն մարդն որ իւր յղացած և  
կամեցած բարին և կամ չարն կարողա-  
ցած չէ գործ գնել, հաշիւ պիտի չը-  
տայ ուրեմն ոչ բարեցն և ոչ չարին  
համար : Եթէ այսպէս ենթադրենք,  
այնուհետեւ կ'ոչնչանայ ամեն պատաս-  
խանատութեան եւ ամեն բարցա-  
կանութեան : Բայց այսպէս չէ : Մարդն  
արտաքին գործքերն կը գատէ . իսկ  
Այսուած ներքինն . այս իմաստիւ է  
որ հասարակօրէն կ'ասեն՝ Ասպուած պր-  
ուն կը դադէ կամ որպէն իւնայ : Եւ մէք  
խեղճ մարդիկներս իսկ, միթէ մէք ես,  
ըստ մեր կարողութեան, սրաին չե՞նք  
նայիր : Միթէ հարիւրաւոր անդամ  
գատաստան չե՞նք արած՝ թէ այս ինչ  
ոճրագործն պակաս յանցաւոր է (ըստ  
որում ակամայ գործած է ինչ որ գոր-  
ծած է) քան թէ այն ինչ պարզ յան-  
ցաւորն, որ կամովին գործած է, ինչ  
որ գործած է : Այսպէս ուրեմն, շա-  
րունակելով գործ անուանիլ ինչ որ ա-  
մեն մարդիկ կ'անուանեն, և հասարա-  
կաց լեզուին մէջ իրարմէ որոշելով  
գործն ու խորհուրդն կամ մտածու-  
թեանն, իրաւունք ունինք ասելու, որ  
իսկապէս մեր կամաւոր խորհուրդներն  
են մեր ճշմարիտ գործքերն . իսկ մեր  
արտաքին գործքերն են միայն նշանակ-  
ներ կամ յայտարարներ :

Աւելի ընդարձակենք այս իմաստն .  
Ամենայն ինչ որ արտաքին է, տեսա-  
նելի և նիւթական, միայն լոկ նշանակ-

է : Ճշմարիտ գործքերն միայն հոգւոց  
գործքերն են : Հոգին է միայն որ իս-  
կապէս կը գործէ : Իսկ այն փափախում  
ներն, որ արտաքրոյ հոգւոցն կ'արտա-  
զրին զբայարանաց միջոցաւ կամ զգա-  
յորանաց աշխարհի մէջ, այդ փափո-  
խումներն միայն զհողին կ'արտացայ-  
տեն և ոչ այլ ինչ : Սոքա գործքեր են  
գարձեալ . չը զբանանք սոյն անունն  
տալու : Բայց սոքա լոկ նշանական կամ  
երեւութական գործքեր են . սոքա մեր  
զգացումներու և կամեցածներու նը-  
շաններն են, կամ մեր ներքին մարդն  
գործ զնելու և հրահանգելու միջոց  
ներ են, և այս բանիս մէջ է ահա ի-  
րենց կարեւորութիւնն : Ինչ որ կը խօ-  
սինք մեր գործոց վերայ, նոյնն պէտք  
է ասել նաև մեզմէն արտապրած բա-  
րի կամ չար բաներու մասին : Այս  
արտագրութիւններով չե՞նք համա-  
րուիր մէք այն ինչ որ ենք . նոքա մի-  
այն արտացայտութիւնն են, միայն վը-  
կայութիւնն են մեր ներքնայն, միայն այս-  
քան է իրենց կարեւորութիւնն : Բայց  
որպէս զի մէք նշանակին իրականու-  
թեան հետ չը շփոթենք և ոչ նշանն  
նշանակեալ իրին հետ խառնենք, ժա-  
մանակին կը կործանէ յաջորդաբար սոյն  
նշանակներն : Այս մասին բնաւ խնա-  
յողութիւն չըկայ, նիւթին ենթակաց է  
օրինաց նիւթոյն, հողն ՚ի հող կը գառ-  
նայ . և մեր մարմինն, որ ոչ թէ մեր  
էութիւնն է, այլ միայն մեր ձեւն  
կամ արտաքին անոփն, մեր մարմինն  
իսկ, որ երեւութական աշխարհի ա-  
ռաջին մասն ու բաժինն է մեզ համար,  
առաջին առարիսն և առաջին գործին  
մեր արտաքին գործողութեան, այս  
մարմինն անգամ կը փոխի, կը մաժ,  
կը նուազի, կ'անկանի, եւ իւր տկար  
և խախուտ յատկութեամբ իւր շա-  
րունակ մահուամբ, ամեն վայրկեան  
կը միշեցնէ մեզ, որ մեր էութեան

կամ գոյութեան նկատմամբ , ստորակարգեալ է ինքն և միայն պատշաճութութեան համար կարեւորութիւն ունի :

Հեռի է մեզմէն այն յիմարական ցնորբն , որով ոմանքը յանդգնեցան տարակութանաց ենթարկել նիւթոյ գոյութիւնն և արտաքին աշխարհի իրականութիւնն : Հեռի է մեզմէն արեկերաց սբանչելի երեւոյթներն առաջը տեսիլներ համարել : Բայց պէտք է խոստովանիլ , որ կայ մարդոյ խոզին մէջ մի բան , որ կը ստիպէ անքակ եւ անբաժան կերպիւ միացնել գոյութիւնն՝ գաղափարի հետ : Մէծ ատենախօս մի ասած է . « Ինչ որ պէտք է վերջնայ , հազիւ թէ ելած է ոչիցութենէ » : Այն որ չէ ստուգուած յարատեւելու համար՝ ինչ կերպիւ , ինչ անուամբ կարող էր մնալ և ազդիլ . Միթէ կը սխալի Ա . Գիրըն , երբ կառէ . « Ապաքէն որպէս ի պատկերի շոջի մարդ » : Միթէ սխալած են այն հոգեիսօս վարդապետներն , երբ մարդկանց նայուածքն գէպ ՚ի աներեւոյթ աշխարհն գարձնելով շարունակ քարոզած են , շարունակ ստիպած են զայն միայն խորհիլ , զայն միայն սիրել , այնու միայն կապիլ , ինչ որ էական է և իրական , ինչ որ լոկ ստուեր չէ և երեւոյթ :

Ասենք համարձակ , որ , բառի կը քօնական իմաստիւ , մի միայն այն էական է և իրական , ինչ որ յաւիտենական է : Ամեն բան , ինչ որ կ'եղանի , ինչ որ կը քայ քայի , թէ մեր շուրջ և թէ մեր մօտ ( ընդ որս է և մեր մարմինն , որ մեզ մօտ է ) բացարձակապէս ոչինչ են , ստուեր անդամ չեն . վասն զի ստուերն , թէ և ստուեր , գարձեալ ինչ է : Ոչ ինչ են , աստղինք , այս ամենն , և նշանակ անդամ չեն , վասն զի նշանակն գարձեալ ինչ է : Աստուած

կամի , որ բնաւ ըլ խարութնիք այս բաներով և ահա այս պատճառաւ է , որ փոխախութեան օրէնքն , առանց մեծ գզրդոցի , կը կրծէ և կը կործանէ ակներու ամեն նշանակներ : Ամենէն սուրբ նշանակներն իսկ կ'անհատին իրենց կարգին : Այն Տաճարն իսկ , որոյ մեծութեան և շքեղութեան վերաց կը սբանչանային աշակերտներն , այն Տաճարն եւս պիտի կործանէր : Վարչականդիր անօրէնութիւնն աւելի պիտի փութացներ այս աւերման սոսկալի կատարածն : Եւ ի՞նչպէս կարող էր ըլ կործանել մարդկային ձեռքով բարձրացած սոյն Տաճարն , մինչդեռ Աստուած , իւր ձեռքով վնասուած տաճարի համար անդամ կործանումն սահմանածն է :

Տիեզերքն է առաջին ամենսոսւրբ և ամենաշքեղ տաճարն ՚ի մէջ ամենայն տաճարաց : Այսպէս անուանել Տիեզերքն կը նշանակէ իւր յասուկ անունն տալ , կը նշանակէ իրաւունք տալ նորու գոյութեանն : Վասն զի , Տիեզերքն եթէ տաճար չէ , հապա ի՞նչ է : Արդ՝ այս տաճարն իսկ , որոյ ձարտարապետն և հիմնադիրն ինքն Աստուած է , պէտք է քայ քայի և աւերի . քանզի Աստուած այսպէս վճռած է : Երբ պղծուած է այն ի՞նչպէս կարող է մնալ : Նա , որ նոր Սամսոնն էր , ( բայց ամենայն սրբութեամբ հանգերձ , զոր չուներ՝ հինն Սամսոնն ) և անկաւ Աստուածոյ ժողովրդեան թշնամեաց ձեռքն , միթէ կարող չը իւր աստուածոյն սիւներն և ըլ թողուլ իւր անմեղ կեանքն Տիեզերաց փլատակներուն ներքեւ : Նա այսպէս չարաւ . այլ միայն կործանման արհաւիրներ եւ նշաններ երեւեցան , որպէս զի մարդկութիւնն սթափի և հասկնայթէ նոյն իսկ երկիրն , իւր բնակիլիներով

հանդերձ, ողբաժնութեամբ միայն կեսոց, ստասանեցան երկիր և երկինք, բայց հաստատեցան վերատին անխռովով և շարու շնորհցին տեսնել՝ թէ Բ'նչպէս օրերն գիշերներուն և գիշերներն օրերուն կը յաջորդեն. Բ'նչպէս ծովին կը ծփայ, կը լիունանայ և կը դաշտանայ աստեղաց աղեցութեան տակ. և թէ Բ'նչպէս աստեղը իսկ երկներն մէջ կը կատարեն լիունց սովորական շրջանն, բայց դատավճիռն յապազած է միայն. Երկիրն, իրբեւ ընդարձակ ծովու մէջ վառուած մի թշուառ նաւ, պէտք է իւր ընդարձակ նստագնացութեան մէջ անհետի բոցերուն և փոթորիկներուն մէջ և ինքն եւս դիտկ և փոշի գառնայ, այնքան դիտկներ և փոշներ կանելին եւ իւր մէջ խորասուղելին դիմի և պէտք է մնայ իրբեւ մի յաւի տեսական տխուր յիշատակ այն երկ նային հոգիներու յիշողութեան մէջ, որոնք նորա ծննդեան ներկայ գտնուեցան և վախճանն տեսին. Ի՞նչ կ'առնմ, այս տաճարն իսկ, իւր շարժուն և յոզդողդ ճարտարապետութեամբ, ուր շատ փաքք տեղ կը գրաւէ երկիրն, այս տաճարն իսկ պէտք է գլխովին խորասուղի բոցերու սիլիխանսին մէջ, որ պէս զի այսպիսի մի դիւրին և արագահատ կատարած դրոշմէ և տպաւորէ ամեն ստեղծեալ հոգիներու վերայ աստուածային տեսչութեան այս յաւիտենական սկզբունքն՝ Նիտին Հոգուոց ՀԱՄԱՐ, Իսկ ՀՈԴԻՆ ՃԵՄԱՐ. ՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵԿ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՍ ՄԱՐ :

Այսպէս ուրեմն, ինչողէս սոյն տաճարի, նոյնպէս և միւս տաճարի քարն քարի վերայ պիտի չը մնայ: “Այս բանին կը նայիք դաքք ուրեմն ո: Եւ արդարեւ՝ եթէ այն բանին նայելու չէ, ինչ որ պէտք է եղծանի, միթէ նայե-

լու է աշխարհին, որ պիտի կործանի և խապտու կորնչի:

ԱՌ համբերատար հետազոտիչներ գաղտնեցայ բնութեան, կ'ուղեցնք արդեօք գատապարտել դձեզ: — ԱՌ նաւ, եթէ նիւթի մէջ հողի կ'որսնէք. եթէ ՚ի միջոց աեսանելցն զանտեսն կը զննէք. և եթէ ափեղերաց մէջ տիեզերաց Արարցն կը նայիք, ՚ի հարկ է անդստապարտելի էք. բայց եթէ այս պէս չէ, անշուշտ Յիսուս Քրիստոս ձեզ եւս կ'առէ, ինչ որ աշակերտացն ասաց. “Այդ արտաքին մեծութեանն ու գեղեցիութեանն կը նայիք”: Ես կը փափաքիմ, ողջ հետազոտիչք բնութեան, որ ձեր զարմացումն աւելի խոհուն լինի և ձեր հետազոտութիւնն աւելի գիտնական: Բայց ի՞նչ օգուտ, եթէ ձեր հետազոտութիւնն կէս ձանապարհին կանգ առնու և ձեր զարմացումն պատրի առարկաներով: Համամիտ եմ ես, որ դուք զննէք այն՝ ինչ որ կը զննէք. բայց նայելու և զերէն և ոչ թէ վարէն: Մարդիկ ամենայն ինչ վատ կը տեսնեն և կամանագուտ կերպիւ կը տեսնեն, երբ Աստուծով և յԱստուած չ'են տեսներ: Բնութեան հրաշալեաց մէջ ի՞նչ բանի վերայ կը զարմանաք գուք, եթէ չէք տեսնեք այն տեղ և չէք զարմանաք Աստուծոյ խորհրդեան վերայ, որ կը թագաւորէ տիեզերաց մէջ: Բայց արեգ մեղ ձեր միտքն, մի թաղուք, որ կասկածինք եւ տարակուսինք ձեր մը տաց ու զգութեան վերայ: Եթէ ձեր միտքն չը բայցատրէք, միշտ պիտի առնենք. “Այդ բանին կը նայիք, այդբանին վերայ կը զարմանաք ո: Մի արխուրէն մահագոյց խարսի, մի խորհրդաւոր գերեզման կըսպառէ, կըլավլ'զէ և կը կլանէ աստեղագիտաց աշխարհն, բնադիտաց աշխարհն, երկրագիտաց աշխարհն: Անդ, ուր աեղին է իսկական

Էռութեան , անդ , ուր աղբիւրն է ճըշ  
մարիս գյութեան , անդ ըլ կայ բնաւ  
ինդիր շորժուն և փափոխական երե-  
ւութից նկատմամբ : Ամենայն ինչ  
պիտի սպառի և միայն այն խորհուրդն  
պիտի մնայ , որ ծնաւ ձեր ամեն տե-  
սածներն եւ ամենուն համար օրէնք  
սահմանեց : Եթէ այս խորհուրդն չ'էր  
ձեր տեսութեան եւ զննութեան ա-  
ռարկան , ուրեմն ի՞նչ բանի նայեցաք :

“ Ոչ թէ տեսիներուն և երեւոյթ-  
ներուն նայեցանք . կ'ասէք դուք , այլ  
տիեզերաց օրէնքներուն , և ահա իւ-  
րաքանչիւր օրէնք խորհուրդ և մտա-  
ծութիւն է արդէն ո : Մէք եւս այս  
կըսպասէնք ձեզմէն : Ասացէք ուրեմն  
հաստատապէս . թէ ի՞նչ է Աստուծոյ  
խորհուրդն , ապա թէ ոչ , մենք պիտի  
ասէնք՝ թէ ի՞նչ է ձեր խորհուրդն ու  
միտքն , ձեր կորովութիւնն ու սրա-  
մատութիւնն , ձեր գիւտասէք ոգին , և  
թէ՝ հետեւապէս դուք միայն ձեղնայ-  
ած էք , այնպէս՝ որ բովանդակ բնու-  
թիւնն մի հայելի միայն եղած է ձերմաց  
ամբարականութեան համար : Ի՞նչ  
նայելու արժանի տռարկայ է այն իմաս-  
տութիւնն , որ ըլ կամիր զԱստուծոյ

ինդրել և փառ արանել : Ի՞նչ զար-  
մացման արժանի նիւթ է այն մարդն ,  
որ կապուած չէ Աստուծոյ հետ : Բայց  
կը սմալիմ ես . նայելու բաներ շատ  
կան : Հրէշներն եւս հրաշքներէն պա-  
կաս իրաւունք չ'ունին , գոնէ առ վայր  
մի , մեր զարհուրեալ նայուածքն գը-  
րաւելու : Այսպէս ուրեմն , այս աշ-  
խարհին նայելին եւ զԱստուծոյ այն  
տեղ ըլ տեսնելուն զինի նայեցէք և զին-  
նեցէք նոյն իսկ նայուածքն : Տիեզերաց  
հրաշտիբներէն պակաս արժանի չ'է նա  
ձեր ուշադրութեան : Տիեզերացն եւս  
կարող է նորան նայիլ : Արարչագոր-  
ծութիւնն , եթէ հոգի և ձայն ունե-  
նար , պիտի աղաղակ բառնար այս  
զարհուրելի սբանչելիքն տեսած ժա-  
մանակ : Բնութիւնն շատ սբանչելիք-  
ներ ունի . բայց սրա նմանն չ'ունի .  
Քանզի բնութեան հրէշներն անդամ  
օրէնք մի ունին : Իսկ այն հրէշն , ո-  
րուն վերաց կը խօսիմք մենք , այն սու-  
կալի հրէշ կամ հրաշտիբն է մարդն՝  
առանց Աստուծոյ մարդն անաստուծոյ ,  
որը ոչ մի օրէնք կարէ բացատրել :

( Կարունակիլ : )

## ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՎԱՒՏ ՆԵՐԱԿԱՆ ՄԱՀԱՀԱՏ ՆԵՐԱԿԱՆ

Քաղաքակրթեալ Պետութեանց  
սրարաքն է հասարակաց իրաւունքն ա-  
պահովելու նուիրել իրենց ջանքը : Այս  
սկզբան պահապահութեանը ծառայող  
միջոցներն ուրիշ բանով ձեռք չեն կըր-  
նար բերուիլ , բայց եթէ արդարու-  
թիւնն ամենուն համար ճշգիւ և ան-  
խորարար գործադրելով , և վարչու-

թիւնն ալ կանոնաւորապէս կազմուո-  
րելով : Անհատական շահներն երկրին  
բարեկարգութեամբն ու բարգաւաճ-  
մամբը միայն կրնան ասպահովիլ , զի  
մասնական շահները սերտ կապահցու-  
թիւն ունին համարկան շահուց հետ :

Ամենուն յայսնի է արդէն , թէ  
Մէք Գահակալութենէն ՚ի վեր , Մէք

կայսերական գիտաւորութեանց և ըդգացմանց առաջին առարկայն եղած է, Աստուծոյ սգնութեամբ, Մեր կայսրութեան մեծութիւնն ու փառքը, Մեր ամեն կարգի հպատակաց անդորրութիւնն ու բարեկեցութիւնն, եւ Մեր պետութեան երկիրներուն հարըստութեանն ու բարգաւաճման համար պէտք եղած յառաջդիմութեան զարգացումը: Մեր այս գիտաւորութիւններն աւելի կատարելապէս արդիւնաւորելու համար՝ որոշեցինք արտօնութիւններ շնորհել Մեր ամեն հպատակաց, եւ միանդամայն հասարակային վատահութիւնը լիովին ապահովագրաբենորոգումներ հրատարակել: Հետեւաբար, Մեր այս կայսերական հրավարտակաւ կը հրամայենք որ հետեւալ տնօրէնութիւններն ՚ի գործ գըրսին Ամենազօրին Աստուծոյ շնորհիւ:

Հասարակային իրաւանց ապահովութեան հիմն է նախ՝ գատասատանական իշխանութեան պաշտօնին՝ գործադիր իշխանութեան միջամտութիւններն կատարելապէս ազատ ըլլովն, երկրորդ ու ե է զեղծմանց գէմ օրինաց պաշտպանութիւնը:

Գատական տառեաններուն վրայ հասարակութեան վատահութիւնը գրաւելու համար, զանոնք սահմաննելը միայն բաւական չէ, այլ պէտք է նաեւ որ այն տառեաններուն անդամներն իրենց ստոյգ արժանեօքն, անստդիւտ վարուքն և ուղղութեամբն, ինչպէս նաև արդարութեան և իրաւանց համաձայն գործերովն հասարակաց համարմանն ու յարգանաց արժանի անձնութ ըլլան:

Մեր Արդարութեան Բարձր Առեան՝ այս ամեն պայմաններն ու բարեմասնութիւններն իւր վրայ կեդրոնացնելու համար միայն հասարակաց համարմանն ու յարգանաց արժանի անձնութ ըլլան:

բուն վրայ հիմնել նորա կազմութիւնն ու իրաւասական պաշտամունքը, և միանդամայն լուրջ բարւործութիւնք մտցնել նորա պաշտամանց այլ և այլ մասերուն մէջ:

Ինչպէս որ գատական ատենից վարչական իշխանութենէն անկախութիւնը միայն կրնայ նոյսա անկողմնակալութիւնն ապահովէլ, նոյնպէս գատաւորաց ալ (օրինաւոր պատճառաւաւ պաշտօնական կութիւնն ՚ի բաց առեալ) անվախութելութիւնը միայն կրնայ զանոնք ամենայն վատահութեան արժանի ընել: Պէտք է ուրեմն գատաւորաց ընտրութիւնն այն կերպիւ ընել, որ ամենուն յարգն ու վատահութիւնը գրաւաէ:

Քաղաքային և պատժական (Նշամիկ) ամեն տառեաններուն գլուխներով վճռաշնչ ատենի (Տիվանը թեմեիզ) նախագահին իրաւասութիւնները բամնուած են Գատական նախարարութեան իրաւասութիւններէն, և այս տառենին երկու հատուածները մէկ առաջին նախագահ և մէկ փոխնախագահ պիտի ունենան:

Միանդամայն Վերաբնութեան ատեան (Խմբինաֆ) և առեւտրական դատարանները պիտի միանան Գատական նախարարութեան հետ. հետեւաբար առեւտրական նախարարութեան կը մնայ վաճառականութեան, արուեստից և երկրագործութեան զարգացմանն ու յառաջդիմութեանը վերաբներեալ խնդրոց զբաղել: Այս նրա ստատակաւ, Արդարութեան բարձրատեսներն կապուած Վերաբնութեան ատեանն՝ առեւտրական վերաբնիչ ատենին, ինչպէս նաև եղեռնագատ ատենին, իրաւասութիւններն իւր վրայ պիտի միացնէ, հետեւաբար քաղաքային, պատժականն և առեւտրական գործոց յատկացնեալ երեք գատարան

պիտի ունենայ, թէ այն ատենին եւ թէ ՎՃԱՐՁՓԻՆջ ատենին Նախադահներն ու դատաւորները վերսախին պիտի ընտրաւին այն կերպիւ որ օրինաց պահանջած ամեն պայմաններն իրենց վրայ միացնեն :

Քաղաքային նախադատ ատեաններն ալ նոյն կերպիւ պիտի բարենորոգին ու սահմանադրին : Այս ամեն ատենից և դատարանաց անդամներն ամենամեծ ուշադրութեամբ պիտի ընտրուին և իւրաքանչյուրին մէկ մէկ կայսերական Պէրաթ պիտի տրուի, որ առանց օրինաւոր պատճառի պաշտօնանկութենէ զանոնք ապահովէ . միւ անդամայն յիշեալ անդամոց ծերութեան կամ անկարութեան պատճառաւ սրա սրաշտօնէ քաշուելու և հանդըստեան թոշակ ստանալու իրաւունքն որոշող կանոնադրութիւն մը պիտի շնուրի :

Դատական գործոց կանոնաւոր և արդար անօրէնութիւնն ասպահովելու համար Արդարութեան բարձր ատեանըն այսպէս վերակաղմելով՝ քաղաքային պատժական և եղեռնական ամեն ատեանները միօրինակ կազմաւորութեամբ իրարու հետ կապելէ ետեւ, կ'ուղէնք որ նոյն կանոններն գործադրին նաև գաւառաց մէջ հաստատեալ գատական ատեաններուն նկատմամբ, որոց պաշտօնն է իրաւունք ընել Մէր հպատակաց և ամեն տեղ արդարութեան օրէնքը թագաւորեցնել :

Այդ ատեաններուն կազմութեան վրայ հասարակութեան կասկածի պատճառ մը չը թողու և իշխանութեան միջամտութենէն ու ազգեցութենէն զանոնք աղքատ պահելու համար բացորոշ կերպիւ հետեւեալը կը հրամացնել :

Մէր ամեն հպատակներն արտօնութիւն ունին իրենք ընտրելու թէ

յիշեալ Ատեաններուն և թէ գաւառային վարչական խորհրդոց անդամներն ու դատաւորները, մահմետական և ոչմահմետական : Ըստ այսուորոշ հրահանգներ պիտի զրկուին Տէրութեան ամեն գաւառներն՝ որպէս զի այդ ատեաններն ու խորհուրդներն հաստատուին և վերը հրամայուած ձեւին համեմատ կազմուին :

Գաւառագլուխինները գտնուող նախակերը՝ տեղոյն Վերաբննութեան ատենին նախադահութեան պաշտօնը պիտի վարեն, իսկ նահանգագլխոց և շրջանակագլխոց քաղաքայինն և եղեռնադատ ատեաններուն նախադահութերն ամենէն ձեռնհառ անձանց մէջ պիտի ընտրուին :

Նահանգագլխոց և շրջանակագլխոց նոր Նէրիի ատեաններէն արուած վըճիւններուն Նէրիի նկատմամբ քննութիւնը գաւառագլխոց Նայիսներուն կը վերաբերի : Եւ որովհետեւ գաւառական ատենից հաստատութեան զլուաւոր նոդատակին իւրաքանչյուր անձի իւրաւանց ապահովութեան երաշխաւորութիւնները կեզրանացնել է, ուստի Մէր Մահմետական հպատակներուն Քրիստոնեայ և ոչ Մահմետական հըպատակաց հետ ունեցած գատերն, ինչպէս գարձեալ այս վերջիններուն իրարու հետ ունեցած գատերը՝ քաղաքայինն, պատժական և եղեռնական ատեաններուն պիտի յանձնաւին : Յիշեալ ատեաններուն գատաւորութեան վերաբերեալ օրէնքներն ու կանոնները՝ Մէր կայսերական հրամանագրերուն համեմատ պէտք է շուտով ամբողջանան ու գործադրին : Օրինաց հաւատարիմ պահպանաւթիւնը բանութեան գէմ ապա-

Հովհանքիւն մ'է , հետեւարար աւեաններուն անդուլ ուշադրութեանը առարկայ պէտք է ըլլայ :

Նմանապէս օրինաց տրամադրութեանց գործադրութիւնն , հաստատեալ ոճրին ծանրութեան համեմատութեամբ , լուրջ նկատողութեան պէտք է առնուի , որպէս զի ոչ ոք առանց դատաստանի բանտարկուի , և խոշոտագանքն ալ երբէք ներելի ըլլայ : Ասոր համար պէտք է հրատարակել թէ սոյն սկզբանց հակառակ վարուղուները դատաստանի պիտի ենթարկին , և օրինաց ամենայն խառութեամբ պիտի պատճուին , որպէս զի արդարութեան բացարձակ յարդանքն ապահովի :

Մեր հպատակաց իրաւունքն երաշխառորդ հիմնական սկզբանց ամենակարեւոր կէտէրէն մին է Պետութեան վճարելի հարկաց և արոց բաշխման ինչպէս նաև . հաւաքման մէջ ուղիղ համեմատութիւն մը հաստատել արդար եղանակաւ : Ճշմարիտ է թէ գանձունընդհանուր հասոյթները՝ Տէ բութեան վարչական և զինուորական ծախուց համեմատեալ են , և թէ սոյդ հասոյթներն երկրին հարստութեան և հասարակաց բարօրութեան հետղիետէ զարդարացման հետ աստիճանաբար աւելցնելու միջոցները պէտք է փնտակել , բայց սէտք է նաեւ , և այս է Մեր կայսերական կամքը , հրաժարիլ այն հասութից ճիւղերէն՝ որը ժողովրդոց նեղանակութեան պատճառ մ'են՝ առանց կարեւոր շահ մ' ընծայելու գանձուն :

Մեր հպատակներուն վճարած ներքին արոց և հանգանակութեանց զանազանութիւնը բաշխման և հաւաքման անկանոն վիճակ մը յառաջ բերելով , կը հրամայենք որ յիշեալ հարկերը միացնելու եղանակ մը դժոնուի և ըլլայ :

անմիջապէս գործադրի , որպէս զի Մեր Տէրութեան ժողովրդոց բեռը թեւթեւնոյ՝ արդար համեմատութիւն մը հաստատելով , առ անց գանձուն օրինաւոր շահերն ալ վտանգի մէջ ձգելու :

Տասանորդի արոց վրայ յաւելեալ քառորդին չնջումէն զատ , զոր մեր ամեն հպատակաց բարեկեցութեան համար Մեր ունեցած կայսերական հոգածութեամբ անցեալներն հրամայեցինք , պէտք է տակաւին ամենաաղդու միջոցներ ձեռք առնուլ և թոյլ չ'աւալ որ տասանորդի տաւբը վարձակալաց միջնորդութեամբ հաւաքելուաթեամբ բանիք ու անիք ըստ թիւններ ու անիք ըստ թիւններ գործաւին , միանգամայն թոյլչուլ որ թէ Մեր երկրագործ ճռ զովրդոց և թէ Մեր կայսերական գանձուն վեստ մը բերուի :

Եւ որպէս Մեր հպատակաց ուղղապէս վճարած հարկերուն ալ հաւաքումն՝ որ յատուկ բնութիւն մը ովտք է ունենայ , գաւառաց մէջ Զապթիէներուն յանձնուած է , և այս եղանակին ալ ասպօբէն ըլլայն համկցուած է այսօր , կը հրամայենք որ ուտիկանութիւնն այսուհետեւ բնաւ չըխառնուի արոց հաւաքման գործերու , այլ մահմետական և ոչմահմետական ժողովւրդներէն ընտրեալ յատուկ հարկաւհաքներն շանակուին , որք յատկապէս պատրաստուելիք հրահանգոց համեմատ՝ հարկերն հաւաքեն : Մեր կայսերական հաստատուն կամքն այս ըլլայով անշապաղ ՚ի գործ պիտի զըրուի , որով թէ գանձուն իրաւունքն եթէ հարկաց հաւաքման եղանակն երաշխառորի :

Մեր հպատակաց շահերուն վերաբերեալ խնդրոց մին ալ անշարժ ըստացուածոց սեփականագրերը (հէօձէթ) բարենորոգելու խնդիրն է : Մեր

փականագրեր տառլու և զանակը մայրաքաղաքիս և գուշառաց մէջ տարբեր բարձրով, շատ անգամ ալ սեփականագիր բնաւ չը գտնուելով, դատական ատեաններուն վրայ բազում աշխատութիւն կը ծանրանայ, գժուարութիւններ ու գատեր կը ծագին ՚ի վեաս ժաղանգոց, և անշարժ կալուածոց արժեքը կը կոտրի : Այս անպատեհութեանց վերջ տալու համար, ամեն կարգի անշարժ ստացուածոց սեփականագրերն այսուհետեւ միմիոյն չէք թէրհանէի ընդհանուր վերատեսչութեան կողմէ պիտի տրուին : Ասոր համար կատարեալ հիմնագիր մը պիտի ներկայացուի որպէս զի Մեր ամեն հըպատակաց սեփականութեան իրաւունքն ապահովի :

Մեր հանապագորեաց փափաքանաց համեմատ մեր ամեն հպատակաց կեանքն, ինչըն ու պասիւը պէտք է ապահովի : Հետեւաբար ստականութեան զինուորներն ամեն աեցերու բընակչոց վատահութիւնը վայելող պարկեցաւ անձանց մէջէ պիտի ընտրուին : Ասոնց պաշտօնին վերաբերեալ անօրէնութիւններն անմիջապէս պիտի գործադրին, որպէս զի Մեր ամեն կարգի հպատակաց մէջ վատահութիւնն ու ապահովութիւնն առաւելեւս հաստատուի :

Մեր տէրութեան մէջ քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը Մեր բաղձանաց առաջնո՞ն բարձրով, և ժողովութեան մը հարստութիւնն ալ բարեկեցութեամբ միայն կրնալով աճիլ, իշխանութեան պարտքնէ Մեր հպատակներն ամեն բռնութիւններէ ու զեղծումներէ աղաս պահել, ինչպէս են ծրի ծառայեցնելու հարստահարական միջոցն, որ արդէն խապառ արդիւեալ է սկզբամք, և որ ձամբաներու պողոտայներու և այլ հասարակաց օգտի

վերաբերեալ շինութեանց համար ՚ի գործ կը գրաւէր, շինութիւնը՝ որոց համար ժողովարդը մէծ վայթ և հայրենասիրութիւն ցոյց կուտայ : Պէտք է ուրեմն զգուշանալ որ մեր հպատակներուն հասարակային շինութեանց համար մասակարարած նպաստն՝ անոնց անձանց և շահուց հարստահարութեան և վեասու պատճառ մը չըլլայ : Հետեւաբար ներկայ պակասաւոր դրութիւնը պիտի բարենորոգի և առաւելերաջսաւորութեամբք շրջապատի : Որոշ և մանրամասն հրահանգներ պիտի տրուին վարչութեան պաշտօնատարաց, որպէս զի շարունակ հսկեն և ուշադիր ըլլան որ այս մասին Մեր կայսերական կամաց հակառակէ բան մը չը կրնայ երբէք զօրծուիլ :

Նկատելով մեր Պետութեան երկիրներուն մէջ երկրագործութիւնը արուեստներն ու վաճառականութիւնը բարենորոգելու և զարգացնելու համար պէտք եղած միջոցները ձեռք առանելու և մեր հպատակաց հարստութիւնն աւելցնելու ստիպողական հարկ կայ, նկատելով նաեւ որ առեւտրական նախարարութեան բուն պաշտօնը Մեր այս դիտաւորութիւնն իրացընել պիտի ըլլայ, կը հրամայենք որ այս նիւթերուն վրայ ձեռնհաս և կարող անձանց խորհուրդ հարցուի և նոցասրումները Մեր կայսերական վաւերամնը ներկայացուին :

Մեր ամեն կարգի հպատակներն, ողբ Մեր կայսերական պաշտղանութեան հովանուցն ներքեւ կապրին, կատարելապէս հաւասար են մեր աչքին և մեր արդարութեան զգացմանց առնելու : Ասոր համար կը հաստատենք Պատրիարքաց և այլ կրօնական գլխոց իշխանութիւնները, զորս կը վարեն իշենց հասարակութեանց գործերուն համար, ինչպէս նաեւ իրենց կրօնից

աղստ սրաշտաման համար , յիշեալ հասարակութեանց ունեցած արտօնութեանց և աղստութեանց համաձայն : Այս ամեն գործերն ողք յիշեալ հոգեւոր զբայց իջևանութեան , անոնց պիտոյից և անոնց յատուկի խորհրդոց էեւն հասութեանը կը պատկանին , այսուհետեւ ալ պիտի շարունակին՝ իրենց շնորհուած իրաւանց և արտօնութեանց սահմանին մէջ Մեր բոլոր պաշտպանութեանն առարկայ ըլլով , և ամեն դիւրութիւնք պիտի շնորհուին իրենց Եկեղեցեաց , Վարժարանաց և այլ Աղբային հաստատութեանց հիմնարկութեանն և շինութեան համար :

Մեր ամեն կարգի հպատակներն իրենց արժանեաց և յաջողակութեան համեմատ Տէրութեան պաշտտամանց հասնելու և աստիճաններ ստանալու աղատութիւն ունենալով միշտ , մեր ոչ — Մահմետական հպտտակներուն այդ պաշտամանց մէջ ընդունուիլ կը հաստատենք՝ երբոր անոնց ուղղութիւնն ու յաջողակութիւնը ձանշուած ըլլոյ :

Զինուորական ծառայութենէ աղատ մնալու առւբն , որում մեր ոչմահմետական հպատակներն ենթագլրեալ են , Մեր մահմետական հպատակներուն ծառայութեան փոխարինութիւն ըլլալու համար հաստատուած է . բայց որովհետեւ իրաւանց հաւասարութիւնը պարագայ գրուած զինուորական ծառայութեան փոխարինութիւն ըլլալու համար հաստատուած է . բայց որովհետեւ իրաւանց հաւասարութիւնը պարագայ գրուած զինուորական մէջ այն աղմանակութեանց մէջ այն արդար համեմատութեամբ ՚ի հաշվու չեն առնուած , և վերջապէս ոչմահմետական հասարակութեանց մէջ սոյն արոց բաշխումն ու հաւաքումն արդար ու կանոնաւոր հսկողութեան մահմետակեալ չէ , կը հրամայենք , իբ-

րեւ նոր նշան մեր արդարութեան , որ յիշեալ արոց բաշխումն այն կերպիւ ըլլայ , որ մեր ոչմահմետական հպատակներէն ամեն անսնք որ գեւ քսան տարու եղած չ'են կամքառսուն տարին անցած են , ինչպէս նաև հիւանդաներն ու անկարներն աղատ մնան այդ տուբբէն : Ուշագրութիւնն պէտք է ըլլայ , որ այդ հանգանակութիւնն անհաստական բաժնի վրայ հաշուելու կանոնն այս անօրէնութեամբ չ'աւրուի , այլ տուբբն հանգանակողոց ստոյգ թըւոյն համեմատ հաւաքուի , և երբոր այդ թիւն աւելնայ , գանձուն հասցեթիւն ալ նոյն յառաջատութեան հետեւի . վերջապէս այդ արոց հաւաքումը նոյն իսկ հանգանակողոց խնամքը պիտի կատարուի վերը հրամայուած ձեւով : Ա բայէս եղած ժամանակ , զինուորական ծառայութիւնէ աղատ մը նալ ուզող մահմետականաց համոր ու բաշուած ներկայ մարդ զլուխ 100 լիրացի տուբբն ալ նոյն հաւասարական սկզբան համեմատ 50 լիրացի պիտի իջնէ :

Մեր տէրութեան երիթներէն ումանց մէջ Մեր ոչմահմետական հպատակները չ'են կրնար կալուածատէր ըլլալ , և ագարակներու մէջ կը գործածուին : Այս վիճակը Մեր արդարասէր զգացմանց հակառակ ըլլալով , այսուհետեւ բնաւ խորութիւն չը պիտի ըլլայ մեր հպատակաց մէջ , թէ դատարկ մնացած և աճուրդով վաճառուած հոգեր գնելու մասին , և թէ մասնաւորներէ վաճառեալ հողեր և այլ ինչքեր ստանալու մասին : Հետեւաբար հոգային ստացուածոց վրայ հաստատեալ օրինաց տրամադրութիւններն ամենակատարեալ հաւասարութեամբ վայելլու ապահովութիւն պիտի տրուի անոնց :

Գաւառաց մէջ բնակեալ Մեր ու-

Սահմետական հպատակոց կոտակները  
պիտի յարգութին, և անշափահատ ժա-  
ռանդաց (եէթիմ) ինչքերուն խնա-  
մակալաց (վասի) ձեռօք մասուակարա-  
բուելուն խառնութիլ բնաւ ներելի չը  
պիտի ըլլայ: Միսյն թէ երբոր խնա-  
մակալաց և կոտակատարաց գէմ յոռի  
մատակարաբութեան գանդատ ըլլայ,  
այն ժամանակ Խըսանութիւնը պիտի  
միջամտէ և անշափահատներու ընչց  
մատակարաբութիւնն իւր հսկողու-  
թեան ներքեւ առնու:

Մեր կայսերական կամբէն բղխած  
այս ամեն հրամանաց եւ արտօնու-  
թեանց գլխաւոր նպատակն է մեր վե-  
հապետական Խըսանութեան ներքեւ  
գտնուած ժողովրդոց բարեկեցութիւ-  
նըն աւելցնել: Պետութեանց մեծու-  
թիւնը, փառքն ու արտահավութիւնը  
չեն կրնար ուրիշ բանսով հաստատ մը-  
նալ, բայց եթէ գործազիր խըսանու-  
թեանց ուղղութեամբն ու արդարու-  
թեամբ, հասաւատեալ Յրինաց ընդ-  
հանուր հնազանդութեամբ և խրա-  
բանչւրին իրաւանց և յատկութեանց  
թէ մեծաց և թէ փորունց կողմէ կա-  
տարեալ պահպանութեամբ: Ամեն ա-  
նոնք որ Մեր Տէրութեան երկիրնե-  
րուն մէջ սոյն սկզբանց համեմատ վա-  
րուին, Մեր կայսերական շնորհաց ար-  
ժանի պիտի ըլլան, իսկ անոնք որ հա-  
կառակ վարուին, արդար պատժոց  
պիտի ենթարկին: Ուստի կը հրամա-  
յենք որ Մեր վաւերացման ներկայա-  
ցեալ կանոն մը հաստատուի, որպէս  
զի Մեր վեհապետական հրամանաց  
հակառակ գործերն և այլ չարութիւնն-  
երը նշանակելու համար ամեն տե-

զեկութիւնը և խնդրուածք մեզ ներ-  
կայացուին կատարեալ ապահովու-  
թեամբ:

Նմանապէս կը կամիսք որ օրինաց  
անթերի պահպանութիւնն ապահովե-  
լու համար ձեռք առնուած միջոցնե-  
րէն զատ կանոններ ու հրահանգներ  
պատրաստուին Վալիներուն, Միւ-  
թէսարբֆներուն, Գայմագամներուն և  
առ հասարակ ամեն պաշտօնատարաց  
իրաւասութեան սահմանները Մեր  
կայսերական հրամանաց համեմատ ո-  
րոշելու համար: Վերջապէս կը կա-  
մինք որ ամենէն հասկցուի թէ սոյն  
հրավարտակաւ Մեր շնորհած արտօ-  
նութիւններն ու շնորհները մի միայն  
անոնց համար են որք իրենց հաւա-  
տարիմ և անկեղծ հպատակութեան  
պարտականութիւնը կը կատարեն. իսկ  
անոնք որ այս ձամբէն գուրս ելած են,  
բնականաբար զուրկ պիտի միան այս  
շնորհներէն:

Արդ, գուք որ Մեր Մեծաշուք  
Վեղիրն էք, սոյն Վեհապետական Հը-  
րովարտակա պիտի հրատարակէք պէտք  
եղած ձեւով, թէ Մեր Մայրաբազու-  
քին և թէ Մեր Տէրութեան ամեն  
գաւառներուն մէջ, և պիտի հսկէք  
որ ասոր պարունակած արամագրու-  
թիւնները ճշգիւ եւ շարունակարար  
գործադրելու համար հարկ եղած ա-  
մեն միջոցները ձեռք առնուին:

Տուեալ ՚ի 13 Զիւտատէ 1292

և 30 Նոյ. 1875

Մասիս

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍԶԴԻ

( Յարկագութեան Տնօրէն Ժողովը  
Ա. Ալուսոյան ) :

Ա. Աթոռոյս Տնօրէն Ժողովին, ընդ  
Նախագահութեամբ Ա. Պատրիարքի,  
իւր 70 և Նիստին մէջ, ուշադրութեան  
առաւ, 'ի միջի այլոց, այն ամբաստա-  
նութիւններն, զորս Աղքային Ընդհա-  
նուր Ժողովը մէջ երեսպատճերէն ո-  
մանք ըրած են ընդդէմ Միաբանու-  
թեան Ա. Աթոռոյս և Աղքային Լրա-  
գիրներէն ոմանք եւս հրատարակած  
են 'ի լուր Աղքին \*

Սոյն ամբաստանութեանց դէմ,  
(որը խսպառ անհիմն են և անբարե-  
խոհ մտաց ծնունդ) Տնօրէն Ժողովը  
հարկ համարեց իւր Խորհրդածու-  
թեան հետեւեալ եղբակացութիւնն  
հրատարակել 'ի լուր Հանրութեան  
Աղքին :

Ա. Սուտ են խսպառ երեսպատճեա-  
նաց ոմանց այն խոսքերն՝ իրը թէ Ա.  
Աթոռոյս Միաբանութեան մէջ խոր-  
հութ եղած է Ա. Էջմիածնի Վեհա-  
փառ Կաթողիկոսի անուան յիշատա-  
կութիւնն դադարեցնել 'ի Ա. Տեղիս :

Բ. Սուտ է խսպառ և ինքնահնար  
այն բարուրանքն, զոր նոյն երեսփո-  
խանք յերիւրած են իրը թէ Ա. Վա-  
նուցս պատերուն վերայ երբեմն յայ-  
տարարութիւններ փակցուած են ընդ-  
դէմ Ա. Էջմիածնի Գահակալին, և իրը  
թէ սոյն յայտարարութիւններն մին-  
չեւ 'ի Պօլիս հասած են :

Գ. Սուտ է, վերջապէս, և քան  
զուտն ստագոյն նոյն երեսպատճեանաց  
այն առարկութիւնն՝ իրը թէ խմբակ  
մի կոյ Միաբանական Ա. Ռւխոփս մէջ,  
որ ջանացած է Ա. Աթոռոյս Ա. Պատ-  
րիարքին կաթողիկոսացնել ընդդէմ Ա.  
Էջմիածնի Վեհափառ կաթողիկոսին .

ասկայն յաջողած չ' իւր դաւադրու-  
թեան մէջ, քանզի Ա. Պատրիարքին  
առաջն առած և խեզգած է զայն :

Այնապիսի խորհուրդներ և իրաղու-  
թիւններ երբէք, բնաւ երբէք, անզի  
ունեցած չ' Ա. Աթոռոյս մէջ, ուս-  
տի և Տնօրէն Ժողովը, համօրէն Մէ-  
աբանական Աւխափ հանգերձ, կը  
սարսափի, երբ կը տեսնէ թէ Աղքա-  
յին այն Ժողովցն մէջ, որ պարտուց  
եւ իրաւանց սահմաններ պիտի գծէ  
Աղքային ամեն Ժողովներու համար,  
ամեն Խորհրդներու համար, ամենիան  
հատի համար, այն Ժողովցն մէջ, որ  
պարտք ունի կրթութեան և գաստի-  
արակութեան նոր օրէնքներով Աղքա-  
յին Մարմինն ամեն արատներէ օրբէլ  
և մաքրել. այն Ժողովցն մէջ, որ Աղ-  
քային Օրէնսդրական Ժողովն է, կը  
գտնուին այնապիսի երեսփատճաններ, որք  
հրապարակաւ ոււտ կը խօսին, հրա-  
պարակաւ Աղքային նշանաւոր Միա-  
բանութիւն մի կ'արատաւորեն, հրա-  
պարակաւ Հասարակութեան պարզա-  
մուռներին կը պատրէն և ամեն տե-  
սակ նենգութեան որսմն կը ցանեն,  
որպէս զի Աղքն խուզվեն, Եկեղեցւոց  
Վարչական Մարմիններն իրարու դէմ  
յարուցանեն, Աղքի բարոյական ոյժն  
լրատեն և արձակ համարձակ ամեն շո-  
րիք գործեն՝ միմիայն իրենց վտտ կամքն  
և շահագիտական նպատակներն յա-  
ռաջ տանելու համար :

Ա. Աթոռոյս Վարչութիւնն կը սոս-  
կայ և դառն վշտք կը պաշարի, երբ  
կը տեսնէ թէ՝ մինչգեռ ինքն կը տագ-  
նապի Աղքային իրաւանց պաշտպանու-  
թեան համար, կը մարտնչի արտաքին  
թշնամեոց հետ, կը հարուածի, կը վի-  
րաւորի, կ'անկանի, կը կանգնի, օգ-  
նութիւն կ'աղջաղակէ, և Աղքային Վար-  
չութեան կ'ապաստանի զօրութիւն և սփո-  
փանք գանելու համարահամայնքնի Աղ-

գային Բարձրագոյն Փողովցն մէջ կը դանուին ներքին թշնամիներ, վայրոտ ոստիներ, որք կը ջանան իւր անունն ու պատիւն արատաւորել, այնպիսի ստայօդ, յուդայական և քմածին զրապարտութիւններ ստեղծաբանելով, որք Միաբանութեանս մոքէն անդամ անցած չեն, թող թէ բանիւ և գործով յայտնուած :

Արդ՝ Ա. Աթոռոյս Վարչութիւնն սաստիապէս կը բողըքէ այս անխիղճ զրապարտցաց դէմ եւ կը պահանջէ, եթէ կարող են, թող վաւերական փառտերով ապացուցանեն իրենց անհեթեթ զրապարտութիւններն, զրս արտայայտած են Աղբային Երեսփոխանական ֆողովց մէջ, ապա թէ ոչ յաւիտեան անջնջ պիտի մնայ իրենց ձակոին վերայ բանսարկութեան, սրտութեան և աղդամատնութեան այն սեաւ կնիքն, զրո ջանացած են անխրդ ձօրէն դրոշմել 'ի ձակառ Միաբանական Ուխտիս, որ ոչ միայն թշնամական իլլրտումներ ունեցած չէ Ա. Էջ միածնի Մայր Աթոռոյն դէմ, այլ շարունակ աղօթած է և կ'աղօթէ, շարունակ հայցած է և կը հայցէ յիստուծյ, որ իւր հզօր Ա. Ծն կարկառէ և զօրացնէ այն Հանրական Ա. Աթոռոն Արարատեան, որ մեր վաղեմի փառաց միակ պարծանքն է, մեր Աղբայնութեան և Քրիստոնէութեան բազմագարեան Վառարանն, մեր Հայրենի յիշտակարանաց ամենէն նշանաւորն, ամենէն նուրիտականն և ամենէն խանդաղատականն :

Ա. Աթոռոյս Վարչութիւնն սոյն պաշտօնական Յայտարարութեան հետ միսսին պարոք կը համարի նաև իւր խորին գոհունակութիւնն մատուցանել Աղբային այն Լրագիրներուն, որոնք պաշտպանած են Ա. Աթոռոյս պատիւն ընդդէմ յանիրաւի թշնամանաց, եւ

իւր դառն ցաւն կը յոյանէ այն Լրագիրներուն, որոնք միամուբար արձագանգ եղած են Երեսփոխանաց ու մանց զրախօսութեանց, առանց ըստուգելու և հիմնովին տեղեկանալու. իսկ առհասարակ ամեն Լրագիրներէն կը խնդրէ յատկապէս իւրեանց էջերուն մէջ առնուլ սոյն Յայտարարութիւնն 'ի հերքումն զրապարտութեանց եւ ի պաշտպանութիւնն ճշմարտութեան և անմեղութեան :

Դի. 30. 1875.

## ԵՐԴՈՒՄՆ Ի ՌԻՒՏԼԻ

ԱՅՆ Երկիրն, որ սյսօր Զուեցերիս կ'անուանի, մասն էր Բուրգոյնի թագաւորութեան, որ մետասաներորդ դարու մէջ քայքայեցաւ : Այն ժամանակէն 'ի վեր Զուեցերիս Նահանգներէն շատերն Գերմանիոյ կայսերաց անուանական գերիշխանութիւնն ճանաչելով Հանդերձ անկախ եղան : Երեքտասաներորդ դարուն վերցերը սոյն Երկրի իշխաններէն մին, այն է Հաբսբուրգի կոմն Ռոդովիկայսր ընտրուելով Հանաց մօտաւորնահանգներն կացուցանել լնդ ծառայութեամբ իւր ժառանդական իշխանութեան : Իսկ նորա որդին Ալբերտ, իրմէն յետոյ կոսոր ընտրուելով՝ բոլորովին ծանրացցոց ծառայութեան լուծըն և սկսաւ անգութե կերպիւ նեղել և հարստահարել Նահանգներն : Ալբերտի կարգած նահանգապետներն սկսան այնպիսի դժողովակ վայրենութիւններ գործ գնել, որ Ուրի, Շվից և Ռանդերլալդ Նահանգներու բնակիչներն վճռեցին, որ նահանգապետներն իրենց Երկրէն հալածեն :

Ունդերվալզցին Սելքթալ կամելով իւր հօր վրէմն առնուել, զոր Աւաստրիայի նահանգապետոն սոսկալի տանջանքով կեանքէ զրաւած էր, միաբանեցաւ ֆիւրստի հետ, որ Ուրինահանքէն էր, եւ Սատաշչըրի հետ, որ Շվիցէն էր :

Սոքա երեքեան, 1307 ին, Գեկտեմբերի 8 ին, գիշերուան մէջ, ժողովեցան Ուիւտի անուաննեալ մարդագետնի վերայ: Իւրաքանչիւրն բերած էր իւր հետ իւր երկրացիններէն տասն հոգի ևս: Երեքն միասն երդուեցան և ուխտեցին առաջի Աստուծոյ՝ կամ ազուտել իրենց հայրենիքն կամ մեռնել. յետոյ իրենց երեսուն ընկերքն ևս նոյն երդմամբ ուստանեցին:

Ռիւտլիի մէջ Հելուետիոյ կամ Զուեցերիոյ աղատութեան երեք հիմնադրաց միաբանութեամբ կատարուած սոյն հռչակաւոր երդումն արդիւնաւոր հետեւանքներ ունեցաւ:

Վիլհելմ Տէլն, որ սոյն միութեան մէջ գտնուած չէր, հրաշալի կերպիւալատուելով Աւստրիացի Գեսլէր նահանգապետի մոլեգին կատալութենէն, սպանած էր զնոյն ինքն Գեսլէր Գիւմնախտի մօտ:

Յունուարի 1 ին ուխտադիրներն պաշարեցին Աւստրիացւոց գրաւած երեք ամրոցներն: Նահանգապետներն յետքաշուեցան: Ոչ մի կամիլարիւն քթափուեցաւ և յաղթողաց ձեռքով վառուած ուրախութեան երկու կըրակներն սկսան փայլիլ ՚ի հեռուստ Ալպեան լերանց վերայ:

Ալբերտ կայսրն, Հաբսբուրգի ամրոցի հանգէսպ սպանուելով իւր մի աղդականէն, որոյ ժառանգութիւնն անկրաւութեամբ յափշտակած էր, նորասրդին Լէոպոլդ Աւստրիացին մեծ բանակաւ արշաւեց Զուեցերիոյ վերայ և փորձ փորձեց իրկին ընդ իշխանու-

թեամբ գրաւել, բայց Մորդատէնի պատերազմին մէջ յաղթուեցաւ եւ այնուհետեւ բոլորովին ապահովեցաւ Հելուետիական Հասարակապետութեան անկախութիւնն:

Այսօր, երբ ճանապարհորդն կը շրջագայի Քատրո - Կանոսնի (Չորս - Նահանգաց) ԼՃի շրջագայքն, մի մարդագետնի մէջ և պտղաւետ ծառերով հովանաւորեալ մի տան մօտ կը տեսնէ երեք աղքիւրներ, որք Առողի կ'անուանին. վասն զի աւանդութիւնն կը պատմէ թէ՝ սոյն աղքիւրներն այն վայրկենին բղիւեցան, երբ Զուեցերիոյ Ազատութեան երեք Հիմնադիրներն իրենց հռչակաւոր երդումն արտասանեցին: Այս մարդագետինն կամ դաշտն է ահա, որ կը կոչուի Գրիւտլի կամ Ռիւտլի:

## ՈՒԽՏ

### Ի Ս. Բ Է Թ Լ Ե Հ Ի Մ

#### Ե Խ Ի Շ Ր Ձ Ա Կ Ա Ց Ս Ո Ն Ո Ր Ի Ն

Առօն վերնադրով հրատարակութիւն մի անցաւ մեր ձեռքն, 30 քառածալ երեսէ բաղկացեալ, որ առաջ Յունարէն հրատարակուած է և առա 1868 ին Ռուսերէն թարգմանուած եւ տպագրուած է Լէյպիցի մէջ: Ռուսերէն հրատարակութեան վերայ յատկապէս նշանակուած է՝ «Յանկացող Ռուս ուխտաւորն կարող է ստանալ Յունաց Ա. Յարութեան տեսչէն կամ Բեթլէհէմի վանքէն»:

Սոյն հրատարակութեան հեղինակն է Բենիամին Խօսննիդիս, որ վախճանեցաւ անցեալ ամսոյն մէջ: Այս եր-

Կիրիլոս Պատրիարքի 'ի Գերմանիա ու  
ամ որդեգիրներէն, որ իւր հմտու-  
թեամբ, լեզուագիտութեամբ և գոր-  
ծունէութեամբ առաջն անձն կը հա-  
մարուէր Յունաց Միաբանութեան մէջ  
և Կիրիլոսի գահընկէցութեան միջոցն  
և՝ ինքն էր առաջն դեր խաղացողն:

Հրատարակութեան պարունակու-  
թիւնն է պատմութիւն Բէթլէհէմ  
քաղաքի վերայ, Ա. Ծննդեան մեծ եկե-  
ղեցւոյ և Ա. Այրի վերայ, նոյն եկե-  
ղեցւոյ սկզբնական շնութեան և յա-  
ջորդ գարուց նորոգութեանց վերայ,  
և այն և այն, որոնք քաղուած են  
գլխաւորապէս յունական առասպե-  
լախառն աղքիւրներէ և մեծաւ մա-  
սամբ կը հակառակին Կոմն Վօդէի  
գիտնական և ընդարձակ աշխատու-  
թեանն, որ ունի այսպիսի վերնադիր  
Les Églises de la Terre Sainte - Եթէլ-  
յի Ա. Երկն:

Մեր նպատակն չ' այս տեղ ձեռ-  
նամաւիւլնելպատմական քննութեան,  
վասն զի Խօննիդիսի հրատարակու-  
թիւնն և ոչ քննութեան ենթարկուե-  
լու չափ արժանաւորութիւն ունի.  
այլ յերիւրուած է միայն ուխտաւո-  
րաց պարզամտութիւնն պատրելու և  
համոզելու համար թէ Բէթլէհէմի ե-  
կեղեցին շնուած է Յունաց ձեռքով,  
կը պատկանի միմիայն Յունաց և Հայք  
ու Լատինք միայն Յունաց շնորհիւ  
մուռք ունին այն տեղ: Ի հարկ է այս  
պէս եւս Կոմն Վօդէն ամենայն ինչ  
Լատինաց և մանաւանդ Խաչակրաց  
վերագրած է: Մեր նպատակն է միայն  
համառօտիւ ցոց տալ թէ յիշեալ հր-  
րատարակութեան հեղինակն, որ ու-  
սուցչապես աստուածաբանութեան  
կը մակագրէ իւր անունն, ինչ նայ-  
ուածքով նայած է Հայոց վերայ և ինչ  
պատկերով ներկայացուցած է իւր ըն-  
թերցողաց, այն է ամեն տարի յԵրու-

սաղէմդիմող բաղմաթիւ Յոյն և Ռուս  
ուխտաւորաց, որք իրենք կարդալէն  
զատ իրենց երկիրներն եւս կը տանին  
նոյն հրատարակութիւնն իրրեւ նու-  
բախն յիշատակ ՚ի Ա. Երկրէն:

Հեղինակն, Ա. Ծննդեան եկեղեցին  
Յունաց վերագրելէն զինի (բայց ՚ի Մարտին  
որ վեհանձնաբար Լատինաց կը թո-  
ղու) կ'ասէ թէ՝ Ծննդեան Ա. յին Յու-  
նացն է, բայց Հայք եւս կը պատարա-  
գեն, և ապա կը յաւելու թէ՝ մեծ  
եկեղեցւոյ հիւսիսային թեւն Յու-  
նացն է, բայց շնորհած են Հայոց, որք  
և այն տեղ ունին Զոհարան:

Կը տեսնենք ահա, որ աստուա-  
ծաբան հեղենակն Սեղն չ'անուաներ,  
ինչպէս իրենցն կ'անուանէ, այլ Զոհա-  
րան, որ հեթանոսական կամ հրէական  
զոհագործութեան տեղի կը նշանակէ:  
Մի թէ հարիւրաւոր անդամ տեսած  
չէ Հայոց արարողութիւններն, և մի  
թէ չը գիտէ, որ Հայք հեթանոսա-  
կան կամ հրէական զոհագործութիւն  
չ'ունին, այլ քրիստոնէական պատա-  
րագ և հետեւապէս սեղան պատա-  
րագի և ոչ թէ Զոհարան: Գիտէ, շատ  
լաւ գիտէ, և քանի քանի անդամ ար-  
դեօք Կիրիլոսի հետ, իրեւ նշանաւոր  
վարդտպետ այցելութեան դալով մեր  
Պատրիարքարանն, խօսած չէ Քրիստո-  
նէութեան վերայ, եկեղեցեաց միու-  
թեան վերայ և այն և այն: Բայց այս  
ամենն լոկ ձեւեր, քնացնելու ձեւեր  
են. և ահա իւր հրատարակութեամբ  
այնպիսի ոգի կը ներշնչէ պարզամիտ  
ուխտաւորներուն, որպէս զի Հայոց սե-  
ղաններն հեթանոսական զոհարաններ  
համարեն, Հայերն իբրև կռատաշներ  
նկատեն, և շատ նուելներ տան իրենց,  
շատ դրամներ զոհէն ամեն կերպիւ  
օճանդակեն, որպէս զի եթէ հասրաւոր  
է օր մի յաջողին Հայերն խպառ ար-  
տաքսել Ա. Տեղիներէն և Աստուծոց

տաճարներն աղատել հեթանոսական զոհագործութենէ :

Լոյլայի դաստիարգութենէն երբէք վար չը մնար Յոյն կղերն Աստուծոյ փառքն տարածելու և արբայութիւնն յառաջացնելու համար : Այն Միաբանութիւնն, որ անամօժարար Հայոց սեղանն Զոհարան կ'անուանէ, այնպիսի լիտի գործեր կը գործէ Աստուծոյ տաճարներուն մէջ, այնպիսի ցոփ արտրմունքներ ունի, որ բնաւերբէք չը կարծուիր որ հեթանոսքուրմերն ներէին իրենց այդ լիտութիւններն . . . . Մեր պարկեշտութիւնն չը ներբէք մինչև անդամ անպատրուակի խօսիլնոցա լվիրշ գործոց վերայ. բայց իրենք կը գործեն առանց երբէք կարմրելու և ամաչելու :

Աշխարհս սցոպէս է, մինչդեռ քը րիստոնէութիւնն խապառ խոյս տուածէ Յոյն Միաբանութեան կեանքէն, ընթացքէն, արտէն և հոգիէն, ընդհակառակին՝ կը հրատարատիէն ՚ի լուր աշխարհի, որ Հայք հեթանոսական զոհարան ունին և ոչքրիստոնէական պատարագի սեղան, Միթէ այս չէ և Առյոլայի Ընկերութեան ընթացքն – ՚ի ներբուստ հեթանոսական գործերէն աւելի վատգործեր գործել և արտաքուստ զայլ իբրեւ անհաւատ և հեթանոս մրուտել :

ՍԻԹՆ շատ անդամ յունական շարակամութեան արարքներն նշաւակած է ՚ի զգուշութիւն մեր միամիտ Աղգայնոց, բայց զմբաղդաբար մերթը ընդ մերթ կը տեսնուի որ մերայնք արտաքին ցոյցերէն երբեմն այնքան կը յափշտակին, որ գոգցես կը մօռանան ամենայն ինչ և ինքնապարծ օրթոգոքսութեան միարարաց թմբկահարութեանն արձագանգ կը տան : Մեր կը կրկնեմք ահա, որ արթուն և զգոյշ մնալու է ամեն ժամանակ եւ օրթո-

դոքսութիւնն (որ թէ հեթանոս կը հոչակէ զմել եւ թէ կը շոյէ՝ միութեան խնդիրն յեղյեղելով) միշտ և հանապաղ համարելու է մեր Ազգայնութեան համար այն անելաննելի անդունդն, ուր գլորուողն պիտի մնայ անյարիր և այլ եւս Հայութեան լցո պիտի չը տեսնէ :

### Ժ Ա. Մ Ա. Ն Ա. Կ Ա. Գ Ր Ա. Կ Ա. Ն Ք

Յունաց ներկայ Պատրիարքի գալստենէն ՚ի վեր որչափ որ առ երեսս Յունաց Միաբանութեան և տեղական յունագաւան ժողովրդոց մէջ խաղաղութիւն կը նշանարուեր, բայց պաշտօնական և հանդիսաւոր կերպիւ երկուստէք հաշտութեան և խաղաղութեան պայմաններն վաւերացած և ընդունուած չը լինելով՝ մերթ ընդ մերթ տժգոհութեան ցոյցեր կ'երեւէին ժողովրդեան կողմէն : Ներկայ ամսոց մէջ Յունաց Պատրիարքն հանդիսաւոր պատարագ մատուցանելին զինի, ուր միսյն ներկայ եր քաղաքացի ժողովուրդն և ոչ եկաւորք կամ ուխտաւորք, Միաբանութեան կողմէն կարգացուեցան հաշտութեան համար պատրաստուած պայմաններն, որոնք յերիւրուած էին այնպիսի հնարագէտ ձարտարամութեամբ, որ պարզամիտ ժողովուրդն խորն չը թափանցելով ընդունուած էր գոհութեամբ և յետ աւարտման հանդիսին ուղղակի ՚ի Պատրիարքարան գիմած էր նախաձաշիկով եւ ըմպելեօք հաշտութեան պայմաններն կնքելու :

Յոյն հանդիսի երկրորդ օրն, որ Կիւրակի էր, քաղաքացի ժողովուրդն եւ կեղեցին երթալով՝ իւր քահանայական դասն ևս տարած էր իւր հետ, որպէս

զի , երբ մի դասէն Յունաց Միաբառ  
նութիւնն յունարէն երգէ , միւս դասէն  
քաղաքացի կղերն Արաբերէն երգէ :  
Այսպէս ևս համօղուածէր ժողովուրդն  
թէ ինքն այսուհետեւ Պատրիարքի ընտ-  
րութեան մէջ քուէ տալու իրաւունք  
պիտի ունենայ եւ պիտի կարողանայ  
իւր տեղական եկեղեցական դասէն ա-  
ռաջնորդ եւս ունենալ , որպէս զի ա-  
մեն ժամանակ ըստիպուի Պատրիար-  
քին և կամ Երուսաղէմի Ամիոդին դի-  
մել : Սակայն շուտով տեսաւ որ խար-  
ւածէ . վասն զի երբ քաղաքացի կղերն  
սկսաւ Միաբանութեան հաւասար ի-  
րաւունքով մի դասն գրաւել և արա-  
բերէն երգել , աղմուկն բարձրացաւ  
եւ Միաբանութիւնն տեսնելով թէ  
պիտի ըստիպուի ահագին բաղմու-  
թիւնն եկեղեցին հանել , ինքն ելաւ  
եկեղեցին և հետեւեալ օրերուն մէջ  
խապառ արգիլեց ժողովրդեան սոյն  
կարծեցեալ ձեռներեցութիւնն և սոյս  
պէս խախտեցաւ նենդութեան տւա-  
զա վերայ հստատեալ խաղաղութիւ-  
նըն : Ինչպէս կ'երեւի տեւական խա-  
ղաղութիւնն գտուարաւ պիտի հաս-  
տատուի Միաբանութեան և տեղա-  
կան ժողովրդն մէջ . վասն զի ժո-  
ղովրդն թեւ և թիկունք ունի իրեն  
(թէ և ոչ յայտնապէս ) Ռուսիոյ Հիւ-  
պատոսարանն , որ ամենայն ճշգու-  
թեամբ կը կատարէ իւր Տէրութեան  
հրահանգներն , այսինքն ոչ թէ պաշ-  
տօնապէս կը միջամտէ , այլ իրեւ հաշ-  
տարար կը ձեւանայ երկոցունց կող-  
մանց , և այն գումարն , որ Ռուսաստա-  
տանէն ամեն տարի յունական Միա-  
բանութեան կը գար և Բուլղարական  
խնդրոյն առ թիւ ընդհատածէր , նոյն  
գումարն այժմ մասն առ մասն կ'ըս-  
տանայ Հիւպատոսարանն եւ ոչ թէ  
Միաբանութեան կը յանձնէ , այլ տե-  
ղական յունադաւան ժողովրդոց կը

բաժնէ իբրեւ աղքատաց , միշտ յայտ-  
նելով որ Տէրութիւնն կարող չէ ան-  
կարեկից լինիլ օրթոդոքս Արաբներուն  
Այսպէս որ այժմ տեղական ժողովուր-  
դըն իբրեւ գաւանակից բարերար կը ճա-  
նաչէ առաւել Ռուսիոյ Կոռավարու-  
թիւնն քան թէ Յունաց Միաբանութիւնն  
իսկ Ռուսիոյ Տէրութիւնն , տեսնելով  
թէ Յունաց Միաբանութեան հետ հա-  
մինթացութիւնն գրեթէ անհնարինէ ,  
տեղական ժողովրդեան միջոցաւ կ'ու-  
զէ տիրական միջամտութիւն ունենալ  
Ս . Տեղեաց մէջ , ուր տակաւին պա-  
տուաւոր և դաւանակից հիւր միայն  
կը համարուի Յունաց Միաբանութեան  
կողմէն և այն յաւէա Ռուս Ռւխտա-  
ւորաց մեծամեծ նուիրանաց և զրա-  
մական զոհողութեանց պատճառաւ :

-Յոյն կղերն գոզցես ուխտած է ա-  
միս մը չանցնել տռանց իրաւունք բըռ-  
նաբարելու և խոռովութիւն յարուցա-  
նելու բնթէ հէմիկէեղեցւոյն մէջ : Այս  
մասին Ս . Աթոռուցս Վարչութիւնն  
գրեթէ շարունակ տագնապի մէջ է :  
Մէրթ հեռագիր կը հասնի բնթէ հէմի  
Տէսչէն թէ ահա Յոյնք մեր բուրվառն  
կախած տեղէն վերուցին : Մէրթ նա-  
մակ կը հասնի թէ սյօր Յոյնք իրենց  
սահմանեալ ժամանակին ըստ հասած՝ ի-  
րենց ժամերգութիւնն սկսան մեր ժա-  
մերգութեան վերայ : Մէրթ հեռա-  
գիր կը հասնի թէ ահա Յոյնք արգելք  
եղան կամ մեր մկրտութեան , կամ  
մեր հարսանեաց , կամ մեր թաղման ,  
կամ մեր նշանաւոր Տօնախմբութեանց  
ժամանակ սիւնաղարդ դաւթէն հան-  
դիսիւ անցնելու , մեր Եկեղեցւոյ ծի-  
սական հնաւանդ սովորութեան հա-  
մեմատ : Ա՛ռ քեզ աագնապ , առ քեզ  
շփոթութիւնն , մկրտեալն , կամ նորա-  
պսակքն , կամ նիշեցեալն ժամերով  
յեկեղեցին պիտի սպասեն , մինչեւ Ն-

րուսաղիմեն հրաման առնուի և զբրկուի, որ ենեն : Մերթ լուր կը հասնի թէ ահամ մեր պատկերն անհետացուցին, մեր աշտանակն վերուցին, մեր աւելի արգիլեցին, և այն և այն :

Յօն կղերին սոյն խռովասէր և անափքրիստոնէական վարժմւնքն և Տէրութեան տեղական (Քեթէհէմի) պաշտօնէից մերթ թոյլ, մերթ կողմնասեր և մերթ բռնաւորական ընթացքն անընդհատ կը տառապեցնեն և կը տառամեցնեն Ա. Աթոռոյ Վարչութիւնն :

Ահա այս անգամ, Ա. Ծննդեան հանդէսներուն մօտաւորութեն պատճառաւ, մինչդեռ կը պատրաստուէինք Ա. Ծննդեան եկեղեցւոյ մեր սեպհական մասն աւելի, յանկարծ գիր եկաւ Վ. անձ. Բգեշխէն մեր այս ինչ և այն ինչ տեղերն չաւել, յայտնելով թէ քըննութեան տակ է, որոց համար Յունաց ևս գրուած է չաւել. իսկ ո՞ր ազգըն որ աւելէ, պատասխանատուութեն ենթակայ պիտի մնայ : — Յօն ազգարարութեան գէմ իսկցին բողքեցինք մեք, յայտնելով որ Յօնք արդէն իրաւունք ըլունին մեր սեպհական տեղելու . իսկ մեր աւելու իրաւանց մասին մեք ոչ միայն նախնական Հրավորտակներ ունինք, այլ և վերջին տարիներուս մէջ յատուել հրամանադիր եւս ունինք Բ. Գունէն : Վասն զի, 1873 ին, երբ Քեամիլ Փաշան զինու զօրութեամբ արգիլեց մեղ մեր սեպհականւութիւնն աւելու, բողոքեցինք ՚ի Բ. Գուռոն և 1874 ին Գեկ. ամսոյն մէջ, թէ և ինքն հրամարուած, սակայն հեռագրեց Քեթէհէմի Միւտիրին հսկել և ըսթոյլատրել Յունաց իրենց սահմանէն դուրս աւել ածելու : Իսկ 1875 ին, Սեֆէր 23 թիւ յատուել Հրամանագիր եկաւ Բ. Գունէն, որ մեր բողոքագիրն ուշադրութեան առնլով

և մեր իրաւունքն յարգելով՝ կը հրամայէր ըստ մեր նախնական սովորութեան մեր սեպհական տեղին աւելէ, ինչպէս որ սոյն հրամանին համեմատ աւելցինք ևսև ահամ ժամանակն մօտեցած է գարձեալ պիտի աւելնք առանց որ և իցէ պատասխանատուութեան ենթարկուելու : Վասմ. Բգեշխն մեր բողոքին պատասխանելով՝ յայտնեց իրբ թէ Տէրութեան Հրամանագրին մէջ ականէ յանուանէ գրուած չէ թէ ո՞ր տեղերն պէտք է աւելէ, այլ միայն գրուած է թէ Հայք իրաւունք ունին իրենց սեպհականութիւնն աւելու, Ուստի առաստաղներն և երեք լուսամուտներն պէտք է մնան ընդ քննութեամբ, որոց վերայ Յօնք իսնդիր յարուցած են :

Սոյն գրոյն գէմ գարձեալ բողոքեցինք՝ յայտնելով թէ առանց ականէ յանուանէ նշանակուելու՝ մեր սեպհականութիւնն արդէն յայտնի է, առաստաղներն և լուսամուտներն մեր սեպհականութեան վերայ են և ոչ ուրիշ տեղ, եւ հետեւապէս Բարեխնամ Տէրութեան Հրամանագրին ամեննեւին մենակութիւն ըլլերցնէր :

Մինչդեռ սոյն բանակցութիւններն կը լինէն՝ յանկարծ ամսոյս 22 ին հեռագիր հասաւ Քեթէհէմի Տեսէն, թէ Յօնք մեր բարձրագոյն առաստաղն աւելցին, որչափ ջանացինք դիմադրել խափանելու հնարք չեղաւ, վասն զի Միւտիրին ըուղեց օգնել մեղ, պնդելով թէ արգիլելու հրաման ըունի Վասմ. Բգեշխէն :

Սոյն ապօրինութեան գէմ գարձեալ բողոքեցինք Բգեշխն, որ յայտնեց թէ ինքն աւելու հրաման գրած չէ Միւտիրին Յունաց համար, այլ միայն գրած է թէ անցեալ տարի որ ազգըն որ աւելած է, գարձեալ նոյնն պիտի աւելէ : Առ այս պատասխանեցինք իրեն որ վերին առաստաղն և ոչ մի ազգ

աւլած է անցած տարի Ա. Ծննդեան ժամանակ, վասն զի նախորդ տարիէն բողըած էինք Յունաց բռնաբարութեան դէմ և Բ. Դռնէն աւլելու հեռագիր եկաւ մեզ այն օրն, երբ մենք Ա. Ծննդեան հանդէսն կը կատարէինք, ուստի և կարող չ' էինք հանդէսն կիւսատ թողուլ և աւլել, և ահա սյն պատճառաւ յետ մնաց: Վերին առաստաղի աւլելուն դէմ բողըած ժամանակ հեռագիր եկաւ Բեթլէ հէմի Տեռչէն թէ՝ “Յոյնք սկսան ահա մեր դրան վերեւ գտնուած մէնն եւս աւլել, բայց արգիլեցինք, սակայն ոչ թէ Միւտիրն, այլ Վ.սեմ, Բդէշի կողմէն յատկապէս զրկուած հազարապէտն յայտնեց թէ սյն մէնն պիտի աւլուի և եթէ ընդդի մանաք հրաման ունիմ զինուորներ կանդնեցնել և այնպէս աւլել տալ, ուստի և ես ասացի՝ օտարաց բնաւ չ' մայլարեր, բայց բանի որ Տէրութեան հազարապէտն կը միջամտէ, մեր հաւատարիմ՝ հարատակութիւնն ըներէր մեզ բնաւ Տէրութեան հազարապէտին և զօրացն դիմադրել. զայս ասելով թողի և ելաց եկեղեցին ո:

Ինչպէս վերին առաստաղի, նյոնպէս և մէնի աւելման մասին վերստին բողըեցինք Վ.սեմ. Բդէշին և ընդնմին առանձին դրով եւս յայտնեցինք թէ՝ մեր Ա. Ծննդեան Տօնն մօանաւակաց զօրութեամբ և Բ. Դռնէն եկած Հեռագրին և Հրամանագրին համեմատ պէտք է աւլենք մեր սեղհականութիւնն, և տակաւին պատասխան ստացած չենք այս մասին. Սակայն յայտնի է թէ վերին առաստաղին և մեզ և մէնի աւելման մօանաւակաց զօրութեամբ Տէրութեան տագնապն ես՝ ի մասին խնդրոյ Ա. Տեղեաց, յորմէ ծնունդ առաւ երբեմն բազմաղէտ Խնդիրն Արեւելեան:

Վերեստին աւլել ընդդիմ Յունաց բըռնաբարութեան. լուսամուտներն եւ ստորին առաստաղին պիտի մնան ընդդիմութեամբ, ինչպէս կանխաւ յայտնած է Վ.սեմ. Բդէշին գրով, և ահա այսպէս դարձեալ տագնապ, դարձեալ զրկանք իրաւանց, տեսնենք թէ ուր և Երբ պիտի վերջանան այս խնդիրներն:

Վերիայ Վսեմ. Բդէշին քաղաքս ժամանելու օրէն ՚ի վեր ամեն տեսակ ցութեանց մէջ միշտ կը յայտնէ թէ՝ Տէրութեան մեծ և ամենամեծ փափաքն է Ա. Տեղեաց եւ մանաւանդ Բեթլէ հէմի Եկեղեցւոյ սեղհականութեան եւ համամասնութեան (միւշտերեկութեան) խնդիրներն կարգադրել օրինաց և իրաւանց համաձայն, և սյն կարգադրութիւնն ոչ միայն օդատակար է Ա. Տեղեաց իրաւատէր երեք Քրիստոնեայ Ա.զգաց, այլ յաւէտ Տէրութեան արտաքին քաղաքականութեան: Մեք եւս համոցւած ենք որ այսպէս է, մեք եւս կը փափաքինք, որ ոչ միայն մեր տագնապն վերնոյ, այլ և մ.ր Բարեխնամ Տէրութեան տագնապն ես՝ ի մասին խնդրոյ Ա. Տեղեաց, յորմէ ծնունդ առաւ երբեմն բազմաղէտ Խնդիրն Արեւելեան:

Լուս յայտարարութեան Վսեմ. Բդէշին, Ա. Ծննդեան Տօներէն ըղկլնի, պիտի սկսի Բեթլէ հէմի Եկեղեցւոյ համամասնութեան և սեղհականութեան խնդրոց կարգադրութիւնն: Կը մաղթենք, որ յաղթանակն արդարութեան կողմն լինի՝ ՚ի փառ ո Տէրութեան և ՚ի պատիւ ներիայ Փախարքային և իւր ստորակարգեալ պաշտօնէից:

ՅՈՒԽԻՍ

- Խորհուրդ և միութեան գործ .  
Ճանաչելու համար խորհուրդ  
պէտք է . շնորհու համար մի-  
ութիւն և գործ . 121—136
- Կիասւէր Եկեղեցի Հայոց ՚ի գիւ-  
զըն Ելքիրէ հ : 136—137
- Կեդրանական վարժարան Ռու-  
րինեան ընկերութեան . Բան  
առ ազգն Հայոց . 137—139
- Դպրոցական շենքեր . 139—140
- Նիւթք ուսման նախնական դըու-  
ր ցներու համար . 140—142
- Պատասխանի . 142—143
- ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 143—144

ՅՈՒԽԻՍ

- Շաղկաբաղ Ամերիքական . Յա-  
փշտակուած զենքեր . 145—152
- Մաղկաբաղ Բրիտանական . Նա-  
խարինամաւթեան վըայ վըա-  
տուհութիւն . 153
- Տէրը պիտի հոգայ . 154
- Անսխաղ Առաջնորդ . 155
- Ճշնարիտ եզիք . 156
- Նամակ . Առ Պ . Ս . Մ . 157—159
- Կիրառութիւն ժամանակի . 159—163
- Խնայողութիւն . 163—167
- Շուշան Շաւարշանայ . 167
- ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 167—168
- Վրիպակ . 168

ՕԳՈՍՏՈՍ

- Կրթարան Աւետարանական  
բանից . ԴԱՍ Ե . Անտոռ-  
բերութիւն կրօնական . 169—177
- Մաղկաբաղ Ամերիքական . —  
Հաւատքով քաղելք . 177—180
- Մաղկաբաղ Ամերիքական . Քը-  
րիառաս առ Քրիստոնեայն . 180—181
- Մանուկն և Քերտիլեն . 181—182
- Տարագիր Սովորկ . 183—184
- Մէր ժամանակուայ ոգին . 185—192
- ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 192

ՍԵՊՏԵՄԲԵՐ

- Կրթարան Աւետարանական  
բանից . ԴԱՍ Ե . Անտոռ-  
բերութիւն կրօնական . 193—202
- ՄԱՀԱԳՈՑԻ . Եղերդ ՚ի տա-  
րաժամ մահ Մուրատայ ,  
գեռահասակ որդւոյ Մեծ .  
Բասբալայ Յ. Մուրատանայ 203—205
- Մէր ժամանակուայ ոգին . 206—208
- Անդղիական Մաղկաբաղ . 208—212
- Ամուսնութիւն և ամուրիու-  
թիւն Եկեղեցականաց . 212—215
- ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 216
- Նոր հրատարակութիւնք . 216

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Կրթարան Աւետարանական  
բանից . ԴԱՍ Զ . Արտա-  
սուք և Երգ . 217—225
- Տիփախիսն կոմ Յիշտակագիրք  
Եկեղեցւոյ . 226—233
- Թէ մինչեւ որ աստիճան նա-  
խանձն կը կուրացնէ զմար-  
դըն . 233—235
- Բարտառնութիւն . 236—238
- Յ . Հովուեան և իւր վիմագիր  
հրատարակութիւնն . 238—239
- Նամակ . 239—340
- Նոր հրատարակութիւնք . 240

ՆՈՅԵՄԲԵՐ

- Կրթարան Աւետարանական  
բանից . ԴԱՍ Զ . Արտա-  
սուք և Երգ . 241—252
- Տիփախիսն կոմ Յիշտակա-  
գիրք Եկեղեցւոյ . 252—261
- Ի բանից Ծագաւորին Նուշ  
րէվանի . 261—263
- Կարեւոր ծանուցումն . 263—264
- ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 264
- Նոր հրատարակութիւնք . 264

# ՑԱՆԿ

## ԴԵԿԱՏՐԲԵՐ

Կրթարան Աւետարանական բանից . . . . .	ԴԱՍ է .
— Տաճարի քարերը . (Եարունակելի) . . . . .	265—274
Հրովարտակ կայսերական Մեծաշուք Վեզլրդ իմ	
Մահմատ Նէտիմ փաշա . . . . .	274—280
Պաշտօնական ազդ . յԱտենագրութենէ Տնօրէն	
Փողովոց Ս . Աթոռոյս . . . . .	281—282
Երգումն ՚ի Ռիւտով . . . . .	282—283
Ուխտ ՚ի Ս . Բեթլէհէմ և ՚ի շրջակայս նորին .	283—285
Ժամանակագրականք . . . . .	285—288

## ԳՐԱԴԱՅԱՀ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մ'կուկես ուժածալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէծիսիլ . հանգերձ Ճանապարհի ծախընթալ կանխովի վճարելի .
- Գ. Չատ տետրակ առնել ուղղող , պէտք է ամեն մէկ տետրին շորս դահեկան վճարէ :